Թ· ՏԱՐԻ 2425 ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 18 ՄԵՀԵԿԱՆ 4384 24 ՓԵՏՐՈՒԱՐ 1892 8 ՇԱՊԱՆ 1309 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

20 ՓԱՐԱ.

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ Է ԻՑԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Կ. Պոլիս

درعلیه‌ده غلطه‌ده آره‌وك غزته‌سی اداره‌سنه

Direction du journal AREVELK
Galata, CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
Քաղաքական եւ Ազգային

20 ՓԱՐԱ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար	Տարեկան	կանխիկ վճար	150
» »	Վեցամսեայ	» »	75
» »	Եռամսեայ	» »	40
Օտար երկիրներէ	Տարեկան	Ֆրանք	56
» »	Վեցամսեայ	»	28
Ընծայ թուղթի վրայ ծանուցման տողը ·	Տարեկան	Օսմ. Ոսկի	2
Գաւառաց թղթատարի ծախքը միջոցնաւ		Դրուշ	50

Խմբագրութեան ուղղուած նամակ կամ այլ գրութիւն ետ չի տրուիր։

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, ՓԵՏՐ. 24/7 ՄԱՐՏ 1892

ԸՆԿԵՐԱՅԻՆ ՆԻՒԹԵՐ

ԳԵՐՄԱՆ ԳԱՂԹԱԿԱՆՔ ՌՈՒՍԻՈՅ

ՑԵՍԱԴԷՄ ՎԻՃԱԿ ՄՈՒԺԻԿԻՆ
ԵՒ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԳԵՐՄԱՆ ՏԱՐՐԻՆ

Վոլկա գետի հովտին մէջ բնակեալ գերման գաղթականք իբր 300 հազար հոգի կը հաշուին։ Դաւանութեամբ բողոքական, կաթոլիկ և Մէնոնեան կոչուած ծայրայեղ բողոքական են։ Հարիւր տարի յառաջ Ռուսիա գաղթած են ի պատասխանի Կատարինէ կայսրուհւոյն յայտարարութեան, որով առանձնաշնորհներ կը խոստանար իրենց, մանաւանդ զինուորական ծառայութենէ ազատութիւն, ինքնակառավարութիւն և կրօնային Թոյլտուութիւն։ Այս արտօնութիւնք տրուած էին նա վէք, այսինքն «յմիշտ», բայց վերջերս այս զոյգ մը բառ այնպէս Թարգմանուեցաւ թէ «մէկ դար միայն» կը նշանակէ։ Երբ գերման գրութեամբ զինուորական ընդհանուր պարտաւորիչ ծառայութիւն մուծուեցաւ Ռուսիա, գերման գաղթականաց ըսուեցաւ որ կա՛մ զինուոր տան կամ ելնեն երթան։ Շատ մը Գերմանք, մանաւանդ Մէնոնեանք որք այս մասին Անգլիոյ Քուէքըրներուն կը նմանին, մեկնեցան։ Ցետոյ փոխուեցաւ գերման գաղթականաց վայելած ինքնակառավարութիւնը։ Գաղթականաց վարչութիւնն յանձնուած էր ի Սարաթով գումարուող ընտրական խորհրդոյ մը, որ կ'ուղղէր գիւղերուն վարչութիւնն։ Այն խորհրդին տեղ ռուս կառավարութիւնն հաստատեց Զեմսքի Նաչալնիք կոչուած գաւառային պաշտօնեայները։ Գերման գաղթականք այսուհետեւ կ'ենթարկին ռուսական ազդեցութեանց։ Քաղաքային և կրօնային արտօնութիւնք մի առ մի կ'առնուին։ Իրենց տրուած հողերն ալ առաջուան չափ բարեբեր չեն այժմ, և երբ նեղը մնան, օգնութիւն չեն ստանար։ Այս և ուրիշ դէպքեր համոզում գոյացուցած են իրենց մէջ թէ Ռուսիա վերջնական բնակավայր չի կրնար լինել իրենց համար, ուստի՝ արդէն սովոն սկսելէն ի վեր մանաւանդ՝ խումբ խումբ Ամերիկա կը գաղթեն։

Բայց ուր որ ալ ըլլան, այս Գերմանք ապրուստ մը կրնան գտնել· զի գովելի ձիրքերով օժտեալ են։ Նախ, մաքուր և պարկեշտ մարդիկ են· արբեցութիւն և ընտանեկան անհաւատարմութիւն կամ սեռային անկանոնութիւն հազուադէպ բաներ են իրենց մէջ։ Կրօնասէր են լուսաւորեալ մօք· որչափ կը ներեն իրենց միջոցներ՝ կը կրթեն իրենց տղայք, և թէպէտ իրենք ագէտ ըլլան, բայց իրենց եկեղեցական հովիւք և վարժապետք ընդհանրապէս ուսեալ մարդիկ են, որք թէև ոչնչով ապրին, բայց խղճի մօք կը կատարեն իրենց պաշտօն։ Աւանդապահ են յոյժ, և հետաքրքրաշարժ է տեսնել Վոլկայի գերման գաղթականներն որք անցեալ դարու գերմանական սովորութիւններն ու բարքերը ճշդիւ պահելէն զատ, նոյն ժամանակի զգեստներն ու կահկարասիքը կը գործածեն դեռ։ Ձկարծուի սակայն թէ յետադէմ մարդիկ են։ Ցամառ աշխատողներ են, և իրենց ուժեղ և կորովի մարմին անսպառ գործասիրութեան հանք մը կը թուի։ Ամենքն ալ արհեստաւորի սերունդներ են, և հայրերէն ժառանգեալ արհեստագործ վարժութիւնն ու տաղանդը կատարելագործած են, այնպէս որ Ռուսիոյ լայնատարած կայսրութեան մէջ այս քանի մը հարիւր գերման գաղթականք ամենէն ճարպիկ արհեստագործները կը համարուին։

Ի՛նչ հակապատկեր մուժիկը։ Ռուս գիւղային ընդհանրապէս երկրագործ է միայն։ Արհեստի խելք յոգնեցուցած չէ։ Երկիրը կը հերկէ, կը ցանէ և ամեն տարի հունձքը կը քաղէ դարերէ ի վեր տեսած ձեւերովը, և ձեռքն անցած քանի մը րուպլը գիւղին գինետան մէջ վատնելու կուտայ։ Կրթութեան հոգ չի տանիր բնաւ։ Բոէն, իւր քահանայն, իրեն չափ ագէտ և մոլի է արդէն։ Եւ մինչ գերման գաղթականը կը բնակի իւր ձեռօք շինած հաստատ շէնքերուն մէջ՝ խոշոր և բարձր սենեակներով, մուժիկն իւր կենդանեաց հետ նոյն սենեակին մէջ կը կենակցի, աղտոտութեան ու գարշութեան մէջ կը լողայ, և չզգար։ Կատարելապէս հլու է. կարծես մարդկային հոգւոյ ամեն զգայնակները բթացած մաշած փճացած են իւր մէջ· ո՛չ մաքրութեան, ո՛չ հետաքրքրութեան, ո՛չ բարոյականութեան բնազդ մնացած է։ Բոլորովին անհեռատես, չգիտէ բան մը ժամանակին մէկ կողմ դնել, և սովուն առաջին և ապահովագոյն զոհն ինքն է միշտ, մինչ նոյն տառապանաց մէջ, նոյն հողին վրայ, իւր դրացի գերման գիւղին բնակիչք կառավարութեան հոգ չեն տար գրեթէ, զի բան մը մթերած ունին միշտ, անյաջող տարիներու համար։ Գերման գաղթականք շատ բան կը պարտին առողջ աւանդութեանց զորս իրենց հետ բերած են գերմանական մայր-հայրենիքէն, և իրենց ուսեալ հոգեւոր հովիւներուն ու վարժապետներուն։ Ասոնք են որ ռուսական ծովուն մէջ կորած այս կղզւոյն վրայ, Վոլկայի գերման գաղութներուն վրայ, գերման ազգութեան և հօրենական կրօնի աւանդութիւնները պահած են, և թէպէտ չորս կողմէ Ռուսերով շրջապատեալ, այս գաղթականք գրեթէ նոյնքան գերման են որքան Վիլհէլմ Բ· կայսեր հպատակները։

Մուժիկներու մէջ տիրող ընտանեկան կեանքը նկարագրելով, անգլիացի Թղթակից մը որ կը պտըտի Ռուսիոյ սովեալ նահանգները, կ'ըսէ թէ գիւղացի ընտանիքներու մէկ սենեկի մէջ պառկիլը ծանր անպատեհութիւններ կը պատճառէ։ Ձախահաս տղաքներ ու աղջիկներ, այրեր ու կիներ, մինչեւ 15 հոգի, մէկ սենեկի մէջ, և յաճախ նոյն վերմակին տակ կը ննջեն։ Այս կողմեր ուսեալ Ռուսերն անգամ դիտողութիւն չեն ըներ այս բանիս, բնական վիճակ մը համարելով զայն, բայց նահանգային եղեռնադատ ատենից մէջ մերթ ընդ մերթ տեղի ունեցած հայրասպանութեան դատերն աններեւ կերպիւ կը պարզեն գործին ուրիշ կողմն։ Հայրասպանութեան դատերն յաճախադէպ են, և շարժառիթը սովորաբար նախանձութիւն է։ Ամուսնացեալ որդին գործի համար մերձաւոր քաղաքը կ'երթայ ձմեան ամսոց մէջ, և ի դարձին կը տեսնէ որ հայրն աններելի կերպիւ օգտուած է իւր բացակայութենէն։ Այս արարք հօր կողմէ այնքան սովորական դարձեր են ռուս գիւղացւոց մէջ որ ռուս լեզուն յատուկ բառ մ'ունի այն հայրն իմացնող որ ամուսնացեալ որդւոյն բացակայութենէն անխղճօրէն օգուտ կը քաղէ։ Ասոր յառաջ կուգան կռիւներ և վրէժխնդրական սպանութիւններ, բայց ռուսական գեղջուկ կենաց այս եղերերգական կողմեր դուն ուրեք արձագանգ կը գտնեն Արեւմտեան Եւրոպիոյ լրագրաց մէջ։

Նոյն Թղթակից կը հեռագրէ հետեւեալը·

«Գիւղերու այս տխուր շրջքին մէջ մարդ երբեմն պայծառ կէտերու ալ կը հանդիպի, օրինակի համար Քոն Քոլոտեց գիւղն, այսպէս կոչուած յանուանէ Մեծին Պետրոսի ձիուն որով այն վեհապետ ողջամբ հասաւ Տօն գետի եզերքը՝ ճամբայն կորսնցնելէ յետոյ թանձր անտառաց մէջ որովք այս երկիր ծածկուած էր յայնժամ։ Ձին մօտերը գտնուող աղբիւրի մը պաղ ջուրը խմելով կը մեռնի, բայց ի պատիւ իրեն կանգնեալ արձանը կը պատմէ իւր քաջագործութիւն։ Հոս այս գեղին մէջ է գաւառային ժողովոյ բացած երկրագործական վարժարանն, ուր միայն մուժիկներու տղայք կը կրթուին։

«Բայց հոս անգամ սովու տառապանք զգալի են։ Վարժապետն ըսաւ ինձ թէ տիպար-ագարակին կենդանիք նիհարնալով վատթարանալու վրայ են, և արդէն մաս մը կորած է։ Գիւղը պտըտելով խղճալի տեսարաններ առջեւնիս ելան։ Ճաշի ժամանակ էր, գիւղացիք իրենց ապուրը կ'եփէին, որ աղտոտ տաք ջուրէ տարբերութիւն չունէր։ Արք խոռոչացեալ աչքերով, տխրադէմ, ոմանք տենդի վերջին տագնապներուն մէջ, ամենքը Թոնիրին վրայ հաւաքուած, վայրկեանէ ի վայրկեան մահուան սպասելով։ Ահա պառաւ մը որ ինքզինք սովամահ կորստեան դատապարտած է, սնուցանելու համար իւր սիրասուն մանչն, որ անձնասէր լիրբ տղայ մ'է վեշտասանամեայ։ Ահա ուրիշ պառաւ մը զոր իւր այր լքած փախած է այլուր, բայց կինը քաջապէս կը մաքառի՝ իւր տղայքն ու Թոռներն ապրեցնելու։ Գաւառային վարչութենէն հաց ընդունած լինելով, կինն ուրախ է յոյժ, և Թէպէտ հացն երեք շաբաթէ աւելի չպիտի օգտէ իրեն, մինչ երկու ամիսէն յառաջ ուրիշ օգնութիւն չի կրնար յուսալ, բայց չի յուսահատիր։ Սրտաշարժ էր իւր զուարթութիւն։ 25 հոգիէ բաղկացեալ ուրիշ ընտանիք մը, հիւղակի մը մէջ դիզուած, յետին աղտոտութեան մէջ, օր ընդ մէջ հաց կ'ուտէին· (մէկ օր կ'ուտէին, մէկ օր ծոմ կը կենային)։ Պառաւ մ'ըսաւ թէ հազիւ կտոր մը հաց կ'ուտէր, և նորէն Թոնիրին քով կը քաշուէր, տաքութեան մէջ իւր ոսկերաց ցաւը մոռնալու։ Ուրիշ տնակի մը մէջ ուրիշ կին մը տեսանք որ սաստիկ լացող երկու տղայքն սփոփել կ'աշխատէր. «Ի՞նչ ընեմ, հա՛ց կ'ուզեն, օթեկ հացի այս չոր կեղեւները միայն ունիմ տալու, այն ալ չեն կրնար խածնել որ ուտեն։» Քովի հիւղակը մտեր էինք, և երիտասարդ մը մարեցաւ ինկաւ գալկադէմ և դողդոջուն, աչքերուն տակը լայն շրջանակներով։ Ժանտատենդէ նոր աղեկցած էր, բայց անօթութիւն ու գարշահոտութիւն կը փութացնէին մահը։ Կը զարմանանք որ այս գիւղին բնակիչք չեն մեռած ամենքն ալ։ Աղտոտութեան բերմամբ մորթի հիւանդութիւնք համաճարակ դարձած են շատ մը գիւղերու մէջ։

«Այս գիւղացիք իրենց աշխատութիւնը խնայել, քիչ յօգնութեամբ շատ բան գործել չեն գիտեր։ Ճարտարմտութիւն բնաւ չունին, անձնապաստանութեան և ինքնօգնութեան զգացումներ ալ ամենեւին չեն կրեր։ Այս առաքինութիւններն իրենց սովրեցնել երկրագործական վարժարանին գործն է։ Դժբախտաբար խիստ քիչ կայ։ Ամբողջ Վորոնէժի նահանգին մէջ միայն մէկ երկրագործական վարժարան 100 աշակերտօք։ Այս աշակերտներն ալ իրենց գիւղին օգուտ չունին։ Դպրոցէն ելնելնուն պէս մեծ ագարակատէրք կը յափշտակեն իրենց գործին մէջ կ'առնուն զանոնք։ Ընդհանուր և թանձր տգիտութեան այս լայնատարած տափաստանին մէջ ո՞ւր պիտի գտնեն մասնագէտ գործակալներ և տեսուչներ իրենց ագարակաց համար։ Ժամանակ պէտք է որ երկրագործական վարժարանին ընթացաւարտք իրենց գիւղերուն մէջ գործել սկսին, և ստացեալ հմտութիւններէն ու նոր գաղափարներէն բաժին հանեն իրենց բնավայրերուն։»

Գերման գաղթականք այս գաւառներէ Ամերիկա կը գաղթեն ո՛չ միայն զի նախկին առանձնաշնորհումնք մի առ մի կ'առնուին իրենցմէ, այլ և զի խտիր կը դրուի իրենց և բուն ռուս գիւղացւոց մէջ։ Եւ սովէ տառապող գերման գիւղորայք առանց նպաստի կը թողուին, (թէեւ Տէրութեան ամեն կողմը կաթոլիկներ և բողոքականներ կը մասնակցին հանգանակութեան,) այն առարկութեամբ թէ գերման գիւղացիք արհեստ գիտեն, կրնան ուրեմն ապրուստ ճարել, մինչ մուժիկներն երկրագործութիւն միայն գիտեն, և երբ երկիրն իւր հունձքը զլանայ, մուժիկներն անեթ կարօտ են և իրաւունք ունին արտաքին օգնութեան։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Միաբանութեանց օրէնքին պատճառաւ Պ· տը Ֆրէսինէի նախարարութեան տապալումը գոհունակութիւն պատճառած էր միապետականներուն։ Սոքա եւս առաւել հրճուեցան երբ ի Փուաթիէ անցեալ երկուշաբթի յաջողեցան հանրապետական երեսփոխանի մը աթոռը կորզել։ Հանրապետական աթոռ մը Թափուր մնացած լինելով, Հանրապետականք իրենց մէջ պառակտեալ էին, և մինչ երեք հանրապետականներ իրարու հետ կը մրցէին, միապետական մ'անոնց մէջ մտնելով յաջողեցաւ ինքն ընտրուիլ։ Ցափնենական ճշմարտութիւն մ'է այս։

—Առեւտրական նախարարն և ամերիկեան դեսպանը պայմանագիր մը կնքեցին, որով Ֆրանսա և Միացեալ Նահանգները կը համաձայնին իրարու ապրանքն ընդունիլ մասնակի փոխադարձութեան պայմանաւ։ Ֆրանսական մորթերն անմաքս պիտի ընդունուին յԱմերիկա, և ֆրանսական նուազագոյն մաքսերն ի կիր պիտի առնուին ամերիկեան համարժէք կարգ մը ապրանաց վրայ։ Երեսփ. ժողովը պիտի վաւերացնէ այս կարգադրութիւն։

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Անցեալ օր ըսինք թէ Պիզմարք իշխանի նախկին Թշնամիք, Ազգային-Ազատականք, անոր կողմը կ'անցնին, այսօր անոր հետ միեւնոյն վարչական գործողութեան հակառակորդները լինելով իրենք եւս։ Ազգային-Ազատականաց 25ամեայ հացկերոյթին մէջ, բաժակ առաջարկեցաւ Պիզմարք իշխանի կենաց, «իբրեւ ճշմարիտ ներկայացուցիչ ազգային գաղափարի, իբրեւ հանճարեղ գործիչն որ Հիւսիսային Գերմանիոյ և Հարաւային Գերմանիոյ համաձայնութեան հիմը դրած էր և գերմանական միութեան գործն հարթած։»

ԿԱՅՈՒԹԻՒՆՆ Ի ՀՈՒՆԳԱՐԻԱ

Հունգարիոյ Երեսփ· ժողովոյն մէջ, նախարարապետ կոմս Սաբարի յայտարարեց թէ Արվայի գաւառին մէջ սով տիրելուն նկատմամբ հրատարակուած լուրերը չափազանց են։ Բայց հունգարերէն լրագիրք ոմանք իրենց գրասենեակին մէջ ի ցոյց դրած են ծառի կեղեւէն շինուած հացեր զորս Արվայի բնակիչք ստիպուած են ուտել։ Թշուառութեան բերմամբ Թանկք կը տիրէ Նամեսթոյի գաւառին մէջ, և գիւղեր կը յիշուին ուր բնակչաց կէսը կորեր են արդէն։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Պ· Կլատսթոն, որ ժամանակէ մ'ի վեր Հարաւային Ֆրանսայի զաղջ կլիման կը վայելէր, անցեալ երկուշաբթի Լոնտոն դարձաւ, տեսնելով թէ Խորհրդարանի նիստերը կարեւորութիւն կը ստանան, և խիստ քննադատութիւնք կան ուղղելի կառավարական կարգ մը ծրագրաց դէմ։ Իւր վակօն-սալօնին դռնէն զինք դիմաւորեցին իւր անդրանիկ դուստր օրիորդ Լէյն Կլատսթոն, Լորտ Ապէրտին և իւր հաւատարիմ տեղակալ Պ· Ճօն Մորլի։ Ժողովուրդն եռանդագին ընդունելութիւն ըրաւ։ Պ· Կլատսթոն անմիջապէս Երեսփ· ժողովը գնաց, և ժողովարահը մտաւ նոյն պահուն երբ արտաքին գործոց նոր խորհրդական Պ· Ճէյմս Լոութըր կը պատասխանէր այն հարցման թէ գործաւորք քանի՛ ժամ կ'աշխատին Ֆրանսայի մէջ։ Եւ ահա Պ· Լոութըրի բանախօսութիւնն յանկարծ ընդմիջեցաւ աշխատանգորդ ծափահարութեամբք ազատականաց և իռլանտացւոց՝ ի տես պատկառելի ծերունւոյն։ Պ· Կլատսթոն նախագահին ձախ կողմն անցնելով բազմեցաւ իւր սովորական տեղն ընդ մէջ Սըր Ուիլիըմ Հարքուրդի և Պ· Ճօն Մորլիի։

—Սէրը քաղաքականութեան կը յաղթէ։ Պահպանողական նախարարութեան ամենէն պերճախօս և գործունեայ անդամոց միոյն՝ Պ· Պալֆուրի քոյրն, որ ջերմապէս համակրող է իւր եղբօր քաղաքական ուղղութեան, կ'ամուսնանայ ազատականի մը հետ, որ ուրիշ մէկը չէ բայց եթէ նոյն ինքն Պ· Կլատսթոնի քեռորդին Պ· Ալֆրետ Լիթըլթըն։ Օր· Պալֆուր այնքան կը սիրէր իւր եղբայր որ անոր տան կառավարութիւնն ինք կը կատարէր թէ՛ Իռլանտայի վարչապետութեան միջոցին և թէ յորմէ հետէ իւր եղբայր Անգլիա դարձած է իբրեւ վարիչ Երեսփ· ժողովոյ։

Պ· ՏԸ ՖՐԷՍԻՆԷ ԵՒ Պ· ՔՈՆՍՏԱՆ

Պ· տը Պլովից կը հեռագրէ առ Թայմզ, ի բացատրութիւն նախարարական վերջին տագնապին և Պ· Լուպէի վարչութեան կազմութեան, թէ Պ· տը Ֆրէսինէի տիրող գաղափարն է՝ յետ այնքան աշխատութեանց՝ իւր հանրային կեանքը պսակել Պ· Քառնոյի յաջորդ ընտրուելով իբրեւ Նախագահ Հանրապետութեան։ Ուստի, մարդ չվշտացնել, ամեն կողմը սիրաշահել, և մինչեւ նախագահական ընտրութիւնն հասարակութեան ուշն իւր վրայ կեդրոնացեալ պահել՝ Պ· տը Ֆրէսինէի ջանադրութիւնն եղած են։ Այս նպատակաւ, յաջողած է ընտրուիլ անդամ Ծերակոյտի, Գիտութեանց Ակադեմիոյ, ապա Ֆրանսական Ակադեմիոյ, և ձեռք անցուցած է պատերազմական նախարարութիւնն, և այս քառեակ դիրքերուն տիրելէն ետքը նախագահութեան հասնիլ յարատեւութեան և համբերութեան գործ է լոկ, և այս ձիրքերով

—)(43)(—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԺԻՒԼ ՎԵՐՆ

ՌՕՊԻՆՍՕՆՆԵՐՈՒ ԴՊՐՈՑԸ

Աւելի արեւելեան կողմն էր հիմայ քան այն տեղն ուր Կոտֆրէյ գացած էր պարապ տեղը իր երկրորդ հետախուզական պտոյտի միջոցին։

Երկուքն ալ արագ արագ կ'երթային, ոչ առանց դիտելու զննելու թէ ճամբան ապահո՞վ էր, թէ մացառներուն կամ թաւուտներուն մէջ պահուած չէ՞ր վնասակար անասուն մը որուն յարձակումը կրնար զարհուրելի ըլլալ։

Բնաւ ձախորդ պատահար մը չունեցան։

Կէս օրին, իրենց ճաշն ընելէ յետոյ, վայրկեան մ'անգամ կանգ չառնելով, երկուքն ալ հասան ծովեզերքին երկայնութեամբը շարուած ժայռերու առաջին կարգին մօտ։ Մուխը, միշտ տեսանելի, կը ցցուէր դեռ քառորդ մղոն մը հեռուն։ Այդ նպատակակէտին հասնելու համար ուղղագիծ ուղղութեամբ մը պարտ էին յառաջանալ։

Փութացուցին իրենց քայլերն, բայց միշտ զգուշութիւններ չմոռնալով ձեռք առնել, որպէսզի յանկարծ վրայ հասնին և իրենք յանկարծակիի չգան ուրիշէն։

Երկու վայրկեան ետքը, մուխը ցրուեցաւ, որպէս թէ զայն արտադրող կրականը յանկարծ մարած ըլլար։

Բայց Կոտֆրէյ ճիշդ ու ճիշդ տեսած էր թէ ուր տեղէն կ'ելլէր այդ մուխը։ Այլանդակ ձեւով ժայռի մը ծայրն էր, տեսակ մը գլխատեալ բուրգ, որուն ձեւը շատ դիւրաւ կարելի էր միտք պահել։ Զայն ցոյց տալով իր ընկերին, ուղղակի անոր մօտեցաւ։

Քառորդ մղոնը շուտ մը քալեցին, յետոյ վեր ելան ժայռերէն· Կոտֆրէյ և Քառէֆինօթու աւազափին վրայ գտնուեցան, ժայռէն յիսուն քայլի չափ հեռու։

Վազեցին հոն։ Ոչ ոք։ Բայց այս անգամ հազիւ մարած կրակ մը, կէս մը կրակ եղած ածուխներ, կը ցուցնէին յստակօրէն թէ այդ տեղը քիչ մը առաջ հուր վառուած էր։

—Հոս մէկը կայ եղեր, գոչեց Կոտֆրէյ, քիչ մը առաջ անպատճառ մէկը կայ եղեր հոս։ Պէտք է իմանալ ով է։

Երկուքն ալ մերձակայ ժայռերուն մէջ սկսան խուզարկել, անցաւ մը, քարայր մը փնտռելով որ կրնար ապաստանարան մը ըլլալ նաւաբեկեալի մը, բնիկի մը, վայրենիի մը։

«Եւ սակայն, կը կրկնէր Կոտֆրէյ, տաք աղբիւրի մը զոլորշին չէր այս անգամ· փայտէ և խոտէ վառուած կրակի մը շոգին էր։ Եւ այս կրակը միս մինակը չէր կրնար վառուիլ։

Զուր հետախուզութիւններ։ Եւ ժամ երկուքին միջոցները Կոտֆրէյ և Քառէֆինօթու, բան մը չգտած ըլլալնուն համար շուարած և անհանգիստ, նորէն Ուիլ-Թրիի ճամբան կը բռնէին։

Պիտի չը զարմանաք եթէ ըսեմ թէ Կոտֆրէյ մեկնեցաւ խոհուն ու մտադբաղ։ Իրեն կը թուէր թէ իր կղզին հիմայ խորհրդաւոր զօրութեան մը ազդեցութեան տակ էր։ Այդ մուխին վերստին երեւումը, գազաններուն ներկայութիւնը, ասիկա արտաքոյ կարգի կնճռոտութիւն մը չէ՞ր ցուցներ։

Եւ այս գաղափարին մէջ աւելի հաստատուեցաւ երբ մարգագետինը մտնելէ ժամ մը յետոյ, լսեց եզական աղմուկ մը, տեսակ մը չոր շառաչիւն։ Քառէֆինօթու հրեց անոր թեւը այն միջոցին ուր օձ մը, խոտերուն մէջ գալարուած պառկած, անոր վրայ պիտի նետուէր։

—Հիմակ ալ օձե՜ր, կղզին մէջ օձե՜ր, արջերէն և վագրերէն յետոյ, գոչեց։

Այո, այդ սողուններէն մէկն էր, զոր շատ դիւրաւ կարելի է ճանչնալ այն աղմուկէն զոր հանեց փախած միջոցին, բոժոժաւոր օձ մը ամենէն Թունաւոր տեսակէն, հսկայ մը Կրոտալներու ընտանիքէն։

Քառէֆինօթու Կոտֆրէյի և սողունին մէջտեղը նետուեցաւ և օձը շուտ մը խոտերուն մէջ աներեւոյթ եղաւ։

Բայց սեւամորթը, անոր ետեւէն վազելով, անոր գլխուն տապարի հարուած մը տուաւ։ Երբ Կոտֆրէյ անոր մօտ գնաց, սողունին երկու կտորները հողին վրայ կը ցատքռտէին, արիւնոտ։

Ցետոյ, ուրիշ օձեր, ոչ նուազ վտանգաւոր, երեւան ելան մեծ թուով, մարգագետնին բոլոր այդ մասին վրայ զոր առուակը կը բաժնէր Ուիլ-Թրիէն։

Սողուններու արշաւա՞նք մըն էր որ յանկարծ մէջտեղ կ'ելլէր։ Ֆինա կղզին մրցակի՞ցը պիտի ըլլար այն հին Թէնօսին, զոր այն ահաւոր ոփիդեաններն համբաւաւոր ըրին հին ատենը և որ իր անունը առաւ իժին։

—Քալե՜նք, քալե՜նք, գոչեց Կոտֆրէյ, նշան ընելով Քառէֆինօթուին որպէս զի քայլերն երագէ։

Անհանգիստ էր։ Տխուր նախազգացումներ զայն կը յուզէին և չէր յաջողէր զայնս զսպելու։

Անոնց ազդեցութեան տակ, մօտալուտ դժբաղդութիւն մը նախազգալով, կը փութար շուտ մը դառնալ ի Ուիլ-Թրի։

Եւ բոլորովին ուրիշ բան մը տեսաւ երբ մօտեցան առուակին վրայ ձգուած կամուրջին։

Սարսափի աղաղակներ կը բարձրանային սէքուօիաներու խումբին տակէն։ «Օգնութի՜ւն» կը պոռային այնպիսի զարհուրանքի շեշտով մը որուն իմաստին վրայ կարելի չէր սխալիլ։

«Թարթըլէ՜թն է, գոչեց Կոտֆրէյ։ Խեղճին վրայ յարձակած են։ Շո՛ւտ, շո՛ւտ, երթանք։

Կամուրջն անցան, ու քանի քայլ հեռուն նշմարեցին Թարթըլէթը, որ իր սրունքներուն բոլոր արագութեամբը կը վազէր։

Ահագին կոկորդիլոս մը, առուակէն ելլելով, կը հալածէր զայն, երախը լայն բացած։ Խեղճ մարդը, խելացնոր, վախէն խենդենալով, փոխանակ աջ ու ձախ զիկզակելու, շիտ շիտակ գիծով մը կը փախչէր, այդպէսով ինքզինքը աւելի վտանգելով։

Ցանկարծ ոտքը սայթաքեցաւ ու ինկաւ։

Կոտֆրէյ կանգ առաւ։ Այդ վերահաս վտանգին ի տես, իր պաղարիւնութիւնը վայրկեան մը չլքոնեցաւ, իր հրացանը ուսին դրաւ, նշան առաւ կոկորդիլոսին աչքին վերեւոքը։

Գնդակը, լաւ ուղղուած, շանթահարեց հրէշը, որ կողմնակի ոստում մը ըրաւ և ինկաւ, անշարժ հողին վրայ։

Քարէֆինօթու սլանալով այն ատեն Թարթըլէթի քով, ոտքի հանեց զայն։ Թարթըլէթի վախը փորը մնացած էր, բայց ի՜նչ վախ։

Ժամը իրիկուան վեցն էր։

Վայրկեան մը յետոյ, Կոտֆրէյ և իր երկու ընկերները Ուիլ-Թրի մտած էին։

Ի՜նչ դառն խորհրդածութիւններ ըրին արդեօք այդ իրիկուան ճաշի միջոցին. ի՜նչ երկայն քնատութիւն մը կը պատրաստուէր այդ Ֆինա կղզւոյն բնակիչներուն, որոնց դէմ կ'ելլէին հիմայ ամեն տեսակ դժբաղդութիւններ։

Գալով խեղճ Թարթըլէթին, իր անձկութեան մէջ ուրիշ բան չէր ըներ բայց եթէ կրկնել սա բառերն որք իր ամբողջ մտածումը կ'արտայայտէին·

—Կուզէի երթալ այս տեղէն։

ԻԱ.

ՈՐ ԿԸ ՎԵՐՋԱՆԱՅ ՔԱՌԷՖԻՆՕԹՈՒ ՍԵՒԱՄՈՐԹԻՆ ԲԱՑԱՐՁԱԿԱՊԷՍ ԱՊՇԵՑՈՒՑԻՉ ՄԷԿ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԵԱՄԲԸ

Ձմեռուան եղանակն, որ այնքան դժընդակ է այդ կլիմաներուն տակ, վերջապէս հասած էր։ Առաջին ցուրտերը կը սկսէին զգացուիլ։ Եւ պէտք էր այդ տեղի բարեխառնութեան ծայրայեղ անախորժութիւններն ալ հաշուի դնել։ Կոտֆրէյ շատ ուրախ եղաւ որ կրակարան մը հաստատած էր իրենց բնակարանին ներսիդին։ Բնականաբար տախտակորմի շինութիւնն աւարտած էր և տոկուն դուռ մը հիմայ կ'ապահովէր շրջափակին ամրափակութիւնը։

Ցաջորդ վեց շաբաթներու միջոցին, այսինքն մինչեւ դեկտեմբերի կէսը, շատ գէշ օդեր եղան, որոնց ատեն անկարելի էր դուրս ելլել։ Նախ և առաջ սոսկալի մրրիկներ ելան։ Սէքուօիաներու խումբը մինչեւ իրենց արմատը դղրդեցին։ Կոտրած ոստերով հողը ծածկեցին, և Ուիլ-Թրիի բնակիչներն անոնցմէ շատ մը ժողվեցին կրակարանին համար։

Այն ատեն Ուիլ-Թրիի հիւրերը կրցածնուն չափ լաւ հագուեցան։ Սնտուկին մէջ գտնուած բուրդէ կերպասները գործածեցին այն մէկ քանի պտոյտներու միջոցին զորս ըրին կերակուրի պէտքերու համար. բայց օդն այնչափ աւրուեցաւ որ ստիպուեցան տունը մնալ իրենց ունեցածովը։

(Շարունակելի)

վուլի օժտեալ է Պ. տը Ֆրէսինէ։ Որովհետեւ Նախարարապետի պաշտօնին մէջ մարդ շատ նախանձորդներ եւ հակառակորդներ կ'ունենայ, Պ. տը Ֆրէսինէ կ'ուզէր պատեհ առթիւ թողուլ Նախարարապետութիւնն, եւ պատերազմական Նախարարի պաշտօնին մէջ շարունակել իւր օգտակար ծառայութիւններ, որք ամեն կողմերէ, նոյն իսկ իւր հակառակորդներէն գնահատուած են։ Ուստի, նոր Նախարարութիւն մը կազմելու առաջարկը մերժելով հանդերձ, ծանոյց թէ պատերազմական Նախարարութեան մէջ մնալ կը յօժարի։ Պ. Բոնդան Պ. տը Ֆրէսինէի դէմ միջակից կը հանդիսանար, եւ Պ. տը Ֆրէսինէ այնքան ճարպիկ գտնուեցաւ որ յաջողեցաւ նոր Նախարարութենէն դուրս թողուլ զՊ. Բոնդան։ Պ. տը Պլովից, համակրելով հանդերձ Պ. Բոնդանի, կը գտնէ թէ ապտակելով զՊ. Լօռ՝ Ներքին գործոց ազգու Նախարարն հանրային համակրանքէ մասամբ զրկուած է. զի ժողովուրդը խորհած է որ եթէ Պ. Լօռ անպիտան մարդ մ'էր, անօգուտ էր ապտակելն, իսկ եթէ կարեւոր մարդ մ'էր, անիրաւ էր ապտակումը։ Թայմսի թղթակիցը կ'ըսէ, միւս կողմէ, թէ Պ. տը Ֆրէսինէ, այնքան արդիւնաւոր պաշտօնավարութենէ ետքն, իրաւունք ունի թեկնածել Նախագահութեան։ Ասոր համար, երկուք ու կէս տարի եւս համբերել պէտք է։

ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ ՄԱՀՈՒ ՊԱՏԻԺ

Երկու շաբաթ յառաջ պատմեցինք թէ Միացեալ Նահանգաց նոր օրէնքին համաձայն, որով մահապարտք ելեկտրականութեամբ կը մահացուին, ի Նիւ Եորք Սինկ Սինկի բանտին մէջ մահուան պատիժը կրած է Մաք Իլվէյն ոճրագործն։ Այս անգամ եւս մահապարտն այնքան տանջուեցաւ որ ներկայք սոսկացին, եւ երեսփոխան մը որ կը գտնուէր, մարեցաւ ինկաւ, եւ սթափելուն պէս յայտարարեց թէ Խորհրդարանին պիտի առաջարկէ ջնջել այս օրէնք, եւ դառնալ հին դրութեան՝ կախաղան։ Երեւակայել պէտք է որ մարդուն միսն այրեցաւ, այրած մսին հոտը սենեակին մէջ տարածեցաւ, եւ խեղճն յետ այնու մեռաւ՝ սոսկալի տանջանաց մէջ։ Ո՛չ, ելեկտրականութեան այս մէկ ծառայութիւնն ալ պակաս թող ըլլայ, կ'ըսեն գիտուններէն շատեր։

ՍԵՐՊԻԱԿԱՆ ԵԼԵՒՄՈՒՏՔ

Պերլինի լրագիրք կը շարունակեն կծու լեզուաւ քննադատել Սերպիոյ ելմտական վիճակն, եւ այս աննպաստ հրատարակութիւնք կ'ազդեն Սերպիական թղթոց վրայ։ 1876ին Սերպիա հանրային պարտք չունէր, մինչ այսօր 13 միլիոն 200 հազար անգլ. ոսկւոյ պարտք մ'ունի, եւ ըստ որում բնակչաց թիւն երկու միլիոն 162,800է աւելի չէ ; բնակիչ գլուխ վեց անգլ. ոսկի պարտք կ'իյնայ։

ԱՆԳՈՐԾՆԵՐՆ Ի ՎԻԵՆՆԱ

Ի Վիեննա անցեալ երեքշաբթի «Ֆոլքսբլաթ» գործաւորական լրագրին միջոցաւ հաւաքեալ հացերուն բաշխումը սրտառուչ պարագաներ ունեցաւ։ 12 հազար այրեր եւ կիներ հաւաքուած էին, եւ հացն 8,000 հոգւոյ միայն օգտեց։ Երբ իմացուեցաւ որ հացն ամենուն պիտի չհասնի, զուրկ մնացեալք յուսահատութեան ճիչեր արձակեցին, զիրար հրմշտկեցին վերջին հացերն իրենց ընդունելու համար, եւ սրտաշարժ էր տեսնել որ այս խռնուող անօթի մարդիկ երբ այն օրն հաց ունենալու յոյսը կորուսին՝ ցաւէն ու զայրոյթէն արցունք թափել սկսան եւ իբրեւ խելագար շարժեցան։ Թէեւ ոստիկանութիւնը բարեկարգութիւն պահպանեց, բայց ամեն դասակարգեր կը զգան թէ անգործ բանուորներուն վիճակն իրաւ ծանր է եւ հզօր ճիգ մ'ընել պէտք է անոնց օգնելու։

ԱՆԳՈՐԾՆԵՐՆ Ի ՊԵՐԼԻՆ

Պերլինի քաղաքային վարչութիւնը կ'աշխատի լուծել անգործ բանուորներու խնդիրն, որ ծանր կերպարան առած է ի Պերլին։ Տարակոյս չկայ թէ անգործներու թիւն այս տարի սովորականէն աւելի է։ Պերլինի քաղաքային շրջանակին մէջ քաղաքային վարչութեան ծախիւք մեծ նաւահանգիստ մը պիտի շինուի, եւ առ այս քանի մը հազար բանուորներ պիտի աշխատցուին։

ՎԻԼՀԷԼՄ ԿԱՅՍՐ

Առաջիկայ ամառ եւս Վիլհէլմ Բ. պիտի ուղեւորի Նորվեկիա, որոյ եղերաց վրայ թէ որսորդութիւն պիտի ընէ եւ թէ ձկնորսութիւն։ Որսի ընկերը պիտի լինի նոյն ինքն օգոստափառ Արթին, եւ ձկնորսութեան առաջնորդն պիտի լինի նոյն ինքն վեհաշուքն Պալինեան։ Կայսրն անտի մինչեւ Իսլանտա կղզին պիտի երկարէ երթայ։

— Գործաւորական ընկերութեանց կողմէ ուղերձներ մատուցուեցան Կայսեր, որով իրենց հաւատարմութեան եւ անձնուիրութեան զգացումները կը յայտնեն վերջին խնդրոց առթիւ, եւ մանաւանդ կը բացատրեն թէ անցեալ շաբթուն առանց պահակներու եւ հետեւորդներու Կայսեր եւ ապա իւր եղբօր գործաւորական թաղերէն անցնիլը շատ հաճելի տպաւորութիւն ըրած է իրենց վրայ, իբրեւ նշան մը կայսերական համակրութեան եւ վստահութեան։

ՌՕՍԻՆԻ

Փետր. 17/29 Նշանաւոր երգահան կամ նուագայօրինող Ռօսինիի ծննդեան հարիւրամեակն էր, որ հաւասար խանդավառութեամբ տօնեցաւ յԻտալիա եւ ի Ֆրանսա ամեն երաժշտասէր ակմբոց մէջ, մանաւանդ թատրոններու եւ օբերաներու մէջ։ Թէեւ Իտալացի էր, բայց շատ սիրեց զՖրանսա, եւ շատ սիրուեցաւ Ֆրանսացիներէն, եւ այսօր ալ թէեւ Իտալացիք եւ Ֆրանսացիք պաղած են իրարմէ, այս պատմական հարիւրամեակ զիրենք պահիկ մը միացուց։ Գլխաւոր Թատրոնք ներկայացուցին իւր գեղեցկագոյն օբերաներէ երկուքն, «Սեվիլի Սափրիչն» եւ «Կիյոմ Թել»։

ՀԱՆՔԱԾԽՈՅ ԽՆԴԻՐՆ ՅԱՆԳԼԻԱ

Մանչէսդրէ կը հեռագրուի թէ հանքածխոյ հրապարակը սաստիկ յուզեալ էր անցեալ երեքշաբթի միջօրէէն ետքն, որովհետեւ վախ կար թէ հանքերն յանկարծ պիտի դադրին արտադրելէ։ Գիները մեծամեծ ելեւէջներ ունեցան ; Տրամադրելի մթերքէն շատ աւելի խնդրանք կար։ Թէեւ դադարեալ գործաւորաց թիւը քառորդ միլիոնը չանցնիր, բայց դարձեալ արտադրութեան զգալի նուազում մ'ըսել է։ Մետաղագործ ճարտարութիւնք եւս այս վիճակէն կը նեղուին, եւ իմացուցած են իրենց բիւրաւոր գործաւորաց որ եթէ հանքածխոյ արտադրութիւնն այսպէս պակսի, պիտի հարկադրին գործերնին դադրեցնել իրենք եւս։ Լոնտոնի կազի ընկերութիւնք Պելճիքա եւ Գերմանիա մարդ ղրկեցին քանի մը միլիոն տակառաչափ հանքածուխ գնելու, որ անգլ. շոգենաւերով պիտի փոխադրի Լոնտոն։ Կ'ըսուի թէ ուրեք ուրեք գործաւորք եւ հանքատէրք խօսք մէկ ըրած են արտադրութիւնը պահ մը պակսեցնելով գինը բարձրացնելու եւ երկուստեք օգտուելու։

—Այս առթիւ սուրհանդակաւ առնուած լրագիրք կը ծանուցանեն թէ հանքածխոյ գիներն արագապէս կը բարձրանան Լոնտոնի մէջ։ Անցեալ չորեքշաբթի առ տակառաչափն չորս շիլինի նոր բարձրացում մը տեղի ունեցաւ Լոնտոնի Սակարանին մէջ։ Որովհետեւ ցուրտը սաստկացած է միեւնոյն ժամանակ, աղքատներուն համար մանաւանդ մեծ փորձանք մ'է այս հանքածխոյ խնդիրը։ Գիներն աւելի սուղ կուգան անոնց որ տակառաչափը մէկէն չեն կրնար առնել, այսինքն՝ աղքատներուն։

Պ. ԼՈՒՊԷԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆՆ

Պ. տը Պլովից անցեալ չորեքշաբթի կէս գիշերուն հեռագրած է առ Թայմզ. —«Այս գիշեր զրոյց եղաւ, բայց ժամանակ չունիմ ստուգելու, թէ դիտաւորութիւն կայ Նախարարութիւնը տապալելու։ Ասով ո՛չ միայն Նախարարական այլ եւ Նախագահական տագնապ մը կրնայ ծագիլ։»

Թէեւ Պ. տը Պլովիցի գուշակութիւնը մինչեւ երեկ չէր ստուգուած, բայց նոր լուրերէն կ'իմացուի թէ Պ. Լուպէի Նախարարութիւնն, (որ նախորդ Նախարարութեան «սրբագրեալ տպագրութիւնը» կ'անուանուի Փարիզի մէջ,) ի սկզբան կարծուածին չափ զօրաւոր դիրք մը չունի, եւ օրէ օր նոր տագնապ մը երկիւղալի է։

ՔՈՆՍՏԱՆ-ԼՕՌԻ ԴԱՏԸ

Ապտակեալ Պ. Լօռ վերաքննութեան չեկաւ դիմել, զի Պ. Քոնստանի դէմ իւր դատէն հրաժարած է առ յայտարարութեամբ թէ «Ինձ դէմ ցոյց տրուած անիրաւութիւնը լի ու լի փոխարինեցաւ ամենէն գեր ի վեր դատարանին, —հանրային կարծեաց դատարանին կողմէ։»

ԱԶԳԱՅԻՆ Լուրեր

ՊԱՆՏԸՐՄԱՅԻ ՎԻՃԱԿԸ

Պանտըրմայի ու Պալըքէսէրի վիճակային գործոց առթիւ անհամաձայնութիւնք ծագած ըլլալով տեղւոյն ազգայնոց միջեւ, առաջնորդ Գեր. Տիմոթէոս եպիսկոպոս Սապրիչեանի, որ ժամանակէ մը հետէ մայրաքաղաքս կը գտնուի, իւր վիճակին մէջ ներկայութիւնն անհրաժեշտ դարձած է այս պահուս։

ԵՆԻ-ԳԱՊՈՒԻ ՀՐԿԻԶԵԱԼՔ

Ըստ յանձնարարութեան Ամեն. Ս. Պատրիարք Հօր՝ Ռուսչուքի հոգեւոր այցելու Գեր. Համբիկ եպիսկոպոս Դիմաքսեան երեկ, կիւրակէ, թէ առաւօտուն եւ թէ երեկոյին Ենի-գաբուի Ս. Առաքելոց Եկեղեցւոյն մէջ քարոզ խօսեցաւ է հոգեւոր մխիթարութիւն հրկիզելոց։ Երեկոյեան քարոզին խուռն բազմութիւն լցուած էր եկեղեցին, ուր քարոզիչ Սրբազանն կրօնական եւ ընտանեկան զարգացման, եղբայրական միութեան եւ դաստիարակութեան վրայ խօսեցաւ, եւ ի մէջ այլոց խօսքն ուղղելով առ հրկիզեալ աղքատ եւ կարօտեալ ժողովուրդն մխիթարեց զանոնք՝ ապաւինիլ Աստուծոյ ողորմութեան եւ միանգամայն Վեհ. Սուլթանին Հայրական գթութեան եւ շնորհաց «զի որչափ հրդեհի պատճառած աղէտն մեծ եւ յոյժ սրտակտուր է, ըսաւ, նոյնչափ եւ առաւել եւս մեծ եւ հզօրագոյն է մեր Հայրագութ Վեհ. Սուլթանին գթութիւնն եւ գերագոյն սիրտն որ գթութեան եւ սիրոյ մարմնացումն է»։ Ապա ջերմագին բարեմաղթութիւններ ըրաւ վասն կենաց Վեհ. Սուլթանին, Որոց սրտառուչ ամէններով մասնակցեցաւ ժողովուրդը։

Նոյնպէս քարոզիչ սրբազանը բարեմաղթութեամբ եւ շնորհակալութեամբ յիշատակեց Բարձր. Սպարապետ Րիզա փաշան, Վսեմ. Ահմէտ փաշան, Քաղաքապետ Վսեմ. Րըֆաթ փաշան, ոստիկանութեան նախարար Վսեմ. Նազըմ պէյը, եւ այլ բարձրաստիճան զինուորական եւ քաղաքային պաշտօնեայներ, որք համաձայն Վեհ. Սուլթանին բարձրագոյն հրամանաց հրդեհի պահուն Ենի-գաբու երթալով աղքատ հրկիզելոց ազատման եւ պաշտպանման համար մարդասիրական հոգածութիւն ունեցած էին։ Շնորհակալութիւն յայտնեց նաեւ ազգային նուիրատուաց եւ բարերարաց որք՝ մասնաւոր նպաստներով աղքատ եւ կարօտեալ հրկիզելոց ցաւն ու կսկիծն ըստ կարի թեթեւցնել կը ջանան։

⁂

Երեք բարեսէր անձանց ոմանց կողմանէ Նուիրեալ 20ի չափ վերմակ եւ 8-10 անկողին եւ հաց բաշխուեցաւ հրկիզեալ աղքատաց ոմանց, եւ նկատելով թէ՝ մեծաւ մասամբ աղքատ եւ կարօտեալք առանց վերմակի եւ յայլ կարեւոր պիտոյից զուրկ մնացած են, Յանձնաժողովոյ անդամներէն Մարուքէ էֆէնտի Ֆրէնկեան եւ Աճառեան Յակոբ էֆէնտի երեկ Քաղաքապետ Րըֆաթ փաշայի ներկայացան եւ Ն. Վսեմութեան յայտնեցին հրկիզեալ աղքատաց ողորմ կացութիւնը։ Քաղաքապետ փաշան խոստացած է պէտք եղած օգնութիւնն ընել։

ԵԶՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Փունջ կը հաղորդէ թէ Գեր. Եզնիկ եպիսկոպոս Ապահունի՝ որում ծանուցուեցաւ Խառն ժողովոյ որոշումը, որ էր յԵրուսաղէմ երթալ բնակիլ, չյօժարիր այդ որոշման համեմատ վարուիլ, առարկելով թէ Կ. Պոլիս գալէն ետքը տուն վարձած, կահաւորել տուած, ծախքեր ըրած եւ պարտական եղած է, թէ իւր խնամոց կարօտ քոյր ու եղբայր ունի, եւ թէ իւր պարտուց վճարման եւ քրոջն ու եղբօրն ապրուստին ապահովման համար Պատրիարքարանը ապահովութիւն ընել պարտի, եւ այլն։

ԿԱՒԿԱՍԵԱՆ ԼՈՒՐԵՐ

Երեկի ռուսական սուրհանդակաւ առնուած Թիֆլիզի լրագիրներէն կը քաղենք հետեւեալ լուրերը.

Էջմիածնից հաղորդում են, որ Ուսումնարանական Մասնաժողովի նոր նշանակուած նախագահը—Արժ. Բարդուղիմէոս վարդապետը հրաժարուել է իւր այդ պաշտօնից. Սինոդի ատենապետի տեղակալ՝ Արժ. Բարդուղիմէոս վարդապետի փոխանակ նշանակել է նախագահ Գեր. Սարգիս եպիսկոպոսին ; օգնական տալով նրան Իգդիրի ծխական ուսումնարանի աւագ ուսուցիչ Լեւոն Խոջայեանցին։ Ուսումնարանական Մասնաժողովի անդամներն են այժմ Գեր. Սարգիս եպիսկոպոս, բարեշնորհ Լեւոն աբեղան եւ պարոն Սաղաթէլեանցը։

—Այսօր, փետր. ի 14-ին, Վանքի մայր եկեղեցում Ս. պատարագից յետոյ կատարուելու է ի Տէր հանգուցեալ Ներսէս Ե-ի հոգեհանգիստը եւ ապա Ներսիսեան ուսումնարանում տեղի կ'ունենայ դպրանոցի տարեկան հանդէսը.

—Հանգուցեալ Աղեքսանդր Լազարեան Թահիրեանցը կտակել էր Ներսիսեան ազգային դպրանոցին, բաց ի իւր բաւականին հարուստ գրադարանից, եւ մի հազար հինգ հարիւր ռուբլի այն պայմանով որ այդ գումարը յանձնուի 10 տարի ժամանակով տեղական բանկերից մէկին, որպէս զի այնուհետեւ գոյացած տոկոսիքով մի թոշակաւոր պահուէր Ներսիսեան դպրանոցում։ Կատարելով իւր հանգուցեալ ամուսնու ցանկութիւնը, յարգելի այրի տիկին Կատարինէ Թայիրեանցը այս օրերը յանձնեց յիշեալ դրամը Ներսիսեան դպրանոցի հոգաբարձութեան։ (Արձագանք)

⁂

Լսում ենք, որ թեմական առաջնորդները, նախ քան Էջմիածին գնալը, որպէս ներկայացուցիչներ իրանց թեմի հոգեւորականութեան կողմից, կաթողիկոսական ընտրութեանը մասնակցելու համար՝ մտադրութիւն ունեն լսելու իրանց ստորադրեալ բազմաթիւ հոգեւորականների կարծիքը, թէ ո՛ւմ կը ցանկանային նրանք կաթողիկոսական գահի վրայ բազմած տեսնելու։

—Սրբազան Տեղակալի կարգադրութեամբ, այս եւս պարտաւորեցուցիչ չէ Արարատ ամսագրի ստանալը վարժապետների եւ վարժուհիների համար։ Սրանից յետոյ Էջմիածնի պաշտօնական օրգանը կը ստանան նրանք որոնք կամենում են։ (Մշակ)

⁂

Ներքին գործերի մինիստրութիւնը օտար դաւանութիւնների վարչութեան վերաբերմամբ անհրաժեշտ է գտել մի կանոն հաստատել, որով այդ վարչութիւնը, նախ քան այդպիսի ծառայութեան մտնել ցանկացողների խնդիրներին ընթացք տալը, այդ մասին տեղական քաղաքացիական իշխանութեան կարծիքը հարցնէր։

Այդ կանոնի հիման վրայ, ինչպէս հաղորդում են Թիֆլիսից, աւագ-քարտուղար Դուրնովոն խնդրել է Կովկասի Գ. կառավարչապետէն կարգադրութիւն անել, որ ուրիշ հաստատութիւնների նման Էջմիածնի հայադաւան Սինոդն էլ այսուհետեւ իւրաքանչիւր անձի մասին, որ խնդիրքով կը դիմէ իրեն ընդունելու յիշեալ հաստատութեան կամ դրանից կախուած տեղերում, պատշաճաւոր Նահանգապետի հետ բանակցութեան մէջ մտնի այն մասին, թէ նրա կողմից արգելք չկա՞յ արդեօք այս կամ այն անձի ընդունելութեան համար, եւ ընդ սմին այս կամ այն անձին պաշտօնի մէջ ընդունելը պէտք է լինի ոչ այլ կերպ, եթէ ոչ յիշեալ իշխանութեան համաձայնութեամբ։ Գործը չձգձգելու եւ տարաձայնութիւնների տեղիք չտալու համար, նահանգապետների արած հարցմունքների մէջ ճշգիւ պէտք է նշանակուած լինին յայտնի անձի ա) կոչումը, բ) անունը, գ) հայրական անունը, դ) ազգանունը, ե) հասակը, (գոնէ մօտաւորապէս) եւ զ) թէ ինչ պաշտօնի է նշանակւում այդ անձը։ (Նոր-Դար)

ԼԵՒՈՆ ԷՖ. ՄՈՄՃԵԱՆ

Խորին ցաւօք կը ծանուցանենք թէ Ազն. Միքայէլ էֆ. Մոմճեանի որդին, Լեւոն էֆէնտի Մոմճեան, ազնիւ ու համակրելի երիտասարդը, հակառակ բժշկական ամեն դարմաններու եւ ընտանեկան խնամոց՝ չկրնալով ազատիլ զինքը տառապեցնող անողոք հիւանդութենէն, երէկ ժամ 9ին կնքեց իր մահկանացուն իր բնակարանին մէջ ի Գատըգիւղ։

Լեւոն էֆ. Մոմճեանի մահը ո՛չ միայն անհուն սգոյ կը պատէ իր ծնողքն ու ազգականներն, այլ ամենադառն կորուստ մըն է հայ երիտասարդութեան համար որուն փայլուն ներկայացուցիչներէն էր։

Ողբացեալն Մոմճեան սրտի ու հոգւոյ ձիրքերով օժտեալ, իր ընտիր դաստիարակութեամբ ու մտաւորական կարողութիւններով՝ կը խոստանար փայլուն ապագայ մը զոր վաղահաս մահը կը խորտակէ՝ կեանքի էն գեղածիծաղ օրերուն մէջ, իր երիտասարդական յոյսերուն ու երազներուն հետ։

Լեւոն էֆ. Մոմճեան՝ առանց Եւրոպա այցելած ըլլալու եւ առանց նոյն իսկ մայրաքաղաքիս գլխաւոր վարժարանի մը ամբողջ շրջանին հետեւած ըլլալու, իր ուշիմութեամբ եւ բնական տրամադրութեանց շնորհիւ՝ Եւրոպիոյ համալսարաններէ դարձող վկայեալ երիտասարդաց չափ ուսումնական մթերք ամբարած էր իր մտքին մէջ։ Քաջ հմուտ, բաց ի իր մայրենի լեզուէն, ֆրանսերէնի, գերմաներէնի եւ անգլիերէնի, մեծ հաճոյքով կը հետեւէր եւրոպական մատենագրութեան ամեն ճիւղերուն։ Գրագէտ մը ու բանաստեղծ մըն էր, առանց բան մը հրատարակած ըլլալու, եւ արուեստագէտ մը՝ գեղարուեստից վրայ իր ունեցած հմտութեամբ։ Եւ այս ամենուն հետ՝ իր բարեհամբոյր բնաւորութիւնն, իր անոյշ խօսուածքը, իր համակրելի դէմքը, ընկերական ձիրքերն՝ անզուգական երիտասարդ մը կը հանդիսացնէին զինքը։

Տէր եւ Տիկին Միքայէլ Մոմճեան եւ իւրեանց համայն ընտանիք ցաւօք սրտի կը ծանուցանեն զգալի կորուստ իւրեանց միակ որդւոյն եւ ազգական

ԼԵՒՈՆ ԷՖԷՆՏԻ ՄՈՄՃԵԱՆԻ

որ կնքեց իւր մահկանացուն կիւրակի օր 23/6 մարտ։

Կը հրաւիրուին ազգականք եւ բարեկամք ներկայ գտնուիլ յուղարկաւորութեան տխուր հանդէսին որ պիտի կատարուի վաղը, երեքշաբթի, առաւօտեան ժամը 4ին ի Ս. Թադէոս Եկեղեցւոյ Գատը-գիւղի, ուրկից հանգուցելոյն մարմինը պիտի փոխադրուի ի գերեզմանատուն նոյն գիւղին։

Գատը-գիւղի շոգենաւը կը մեկնի կամուրջէն ժամ 3.45ին։

Ներքին Լուրեր

ՊԱՏՈՒԱՆՇԱՆՔ

Առաջին կարգի Մէճիտիյէ պատուանշան տրուեցաւ ֆրանսական նաւատորմին գեր-ծովակալ Տրաէզսաի։

Չորրորդ կարգի Մէճիտիյէ՝ Օսմ. Մալիյէ դիւանի քարտուղարներէն Խաչիկ էֆէնտիի։

Ի ԿԱՅՍ. ՊԱԼԱՏ

Բարձր. Մեծ-Եպարքոսը, Բարձր. Սպարապետը, Թնդանօթարանի Վսեմ. վերատեսուչն եւ Ոստիկանութեան Նախարարն երէկ յաջորդաբար կայս. պալատ գնացին եւ ստացան Վեհ. Սուլթանի հրամանները։

—Ատանայի Նորընտիր կուսակալ Հաճի Իզզէթ էֆէնտին եւ Գասթամոնիի կուսակալ Ֆաիգ փաշա երէկ կայս. պալատ երթալով շնորհակալութիւն մատուցին իրենց շնորհեալ պաշտօններուն համար։

Ի Բ. ԴՈՒՌՆ

Նախարարաց Խորհուրդն իւր երէկի նստին մէջ զբաղեցաւ Ներքին գործոց վերաբերեալ կարեւոր խնդիրներով։ Նախարարաց Խորհուրդը նոյնպէս խորհրդակցութիւններ կատարեց անտառաց եւ հանքաց վարչութեան նկատմամբ։ Անտառաց եւ հանքաց ընդհանուր տնօրէն Վսեմ. Պետրոս էֆէնտի Նախարարաց Խորհուրդին կոչուելով անտառաց եւ հանքաց նկատմամբ բացատրութիւններ տուաւ։

—Ոստիկանութեան նախարար Վսեմ. Նազըմ պէյ երէկ Բ. Դուռն երթալով տեսակցեցաւ Բարձր. Մեծ-Եպարքոսին հետ։

ՏԱՐԵԴԱՐՁ ԾՆՆԴԵԱՆ
ՎԵՀ. ՍՈՒԼԹԱՆԻՆ

Մայրաքաղաքիս ու արուարձանաց մէջ մեծամեծ պատրաստութիւններ կը տեսնուին Վեհ. Սուլթանի ծննդեան տարեդարձին առթիւ կատարելի լուսավառութեանց համար։

—Եգիպտոսի Խտիվ Աբպաս փաշայի եւ Եգիպտացի ժողովրդեան կողմէ եւս մեծամեծ պատրաստութիւնք կը տեսնուին ամեն տարուընէ աւելի շքեղ կերպիւ տօնելու համար Վեհ. Սուլթանի ծննդեան տարեդարձը։

—Վեհ. Սուլթանին կողմէ շնորհեալ հինգ հարիւր ոսկին, որ պիտի յատկանայ փոքր պարտքերու համար բանտարկեալ անձերու պարտուց վճարման, յատուկ պաշտօնէի մը միջոցաւ յանձնուած է Դատական Նախարարութեան։ Այդ առթիւ կազմեալ յանձնաժողովը նկատելով որ այդ գումար առատապէս կը բաւէ ներկայացուեալ ցուցակին մէջ նշանակեալ անձանց պարտքը վճարելու, որոշած է յաւելեալ մասն յատկացնել այդ ցուցակէն դուրս գտնուող այն անձանց, որք նախապէս դատապարտուելով, անկարող կը գտնուին վճարելու իրենց պարտքն եւ որոց այս վիճակն հաստատուած է կատարուած քննութեամբ։ Այս առթիւ պատրաստուած ծրագիրը հանդերձ ցուցակով մատուցուած է Վեհ. Սուլթանին։

Փոքր պարտուց համար բանտարկեալ անձինք, [illegible], այսօր ազատ պիտի արձակուին ի ներկայութեան հարկ եղած պաշտօնէից։

—Դատական Նախարարութիւնն այսօր Վեհ. Սուլթանին պիտի մատուցանէ ցուցակ մը, յորում նշանակուած են իրենց պատժոյն երեք չորրորդ մասն աւարտող յիսունի չափ բանտարկելոց անուններ եւ որք՝ Վեհ. Սուլթանի ծննդեան տարեդարձին առթիւ ազատ պիտի արձակուին։

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

(Թարիքէն Վագըթէն քաղուած)

Պէրութի կուսակալութիւնը փետրուար 19 թուականաւ հեռագրած է Ներքին գործոց Նախարարութեան թէ Լաթաքիոյ շրջակայ Ճէպէլը Նասիրի աւազակները ձերբակալուեր են եւ թէ անոնց պետերէն Ալի Շէյլի ստիպուեր է անձնատուր ըլլալով ներողութիւն խնդրել։ Ալի Շէյլի, որ եօթնասուն տարեկան ըլլալով դեռ իւր հայրենիքը ոտք կոխած չէր, նոյն աւազակաց պետերէն՝ իւր ընկերոջ Բէզզաքի հետ Համա գաւառի կեդրոնը դիմելով հնազանդութիւն յայտնած է։ Այդ աշիրէթի ժողովուրդն, որ երկու սեռէ 12,000 հոգւէ կը բաղկանայ, կայս. կառավարութեան օրինաց հնազանդութիւն յայտնած եւ սկսած են վճարել իրենց տուրքերը։

—Եէմէնի կուսակալութիւնը փետրուար 20 թուականաւ հեռագրած է թէ, շնորհիւ Վեհ. Սուլթանին, Ասիր գաւառին մէջ կատարեալ անդորրութիւն կը տիրէ եւ թէ հանրային առողջապահական վիճակն ալ գոհացուցիչ է։

— Տիարպէքիրէն, Տրապիզոնէն, Քարբերդէն, Ատանայէն, Կոնիէն, Վանէն, Էնկիւրիէն, Բաղէշէն եւ Սեբաստիայէն զանազան թուականներով եկած հեռագիրք կը ծանուցանեն թէ այդ նահանգաց մէջ եւս կատարեալ անդորրութիւն եւ ապահովութիւն կը տիրէ։

ՔԱՂԱՔԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Քաղաքապետ Վսեմ. Րըֆաթ փաշայի ձեռք առած միջոցներուն շնորհիւ, կլիսի, աղիսի եւ ուրիշ տուրքերու հասոյթն այս տարի, նախորդ տարիներու հետ բաղդատմամբ, տասը հազար ոսկւոյ յաւելում մը ունեցած է։ Ն. Վսեմութիւն նոյնպէս հարկ եղած միջոցները ձեռք առած է յառաջիկայ տարւոյն հասոյթից մասին եւս յաւելումներ ձեռք բերելու համար։

ՊՈԼՍՈՅ ՔԱՐԱՓՈՒՆՔ

Պոլսոյ քարափանց ընկերութիւնն, որ ինչպէս յայտնի է, յառաջիկայ գարնան շինութեանց պիտի սկսի, որոշած է գնել Սիլահտար Աղայի շրջակայքը գտնուած լեռն, ուրկից պիտի առնու քարափները լեցնելու համար հարկ եղած հողերը։ Ընկերութիւնը նոյնպէս բանակցութեանց սկսած է յանձնառուներու ոմանց հետ՝ օրական քանի հազար չէքի քարի մատակարարութեան համար եւ նաւազուրգի գործողութիւնք ի մօտոյ պիտի սկսին։

ՆԵՐՈՒՄ

Ըստ տեղեկութեանց Հաքիքաթի, Բէտրօ, Արթին եւ Նիքօլի անուն անձինք, որք անվայել լեզու մը գործածած ըլլալով՝ ի Հալէպ եւ յԱքքա բերդարգելութեան դատապարտուած էին, բարձրագոյն հրամանաւ ազատ արձակուած են, որովհետեւ այդ տեղերէն ծանուցուած էր թէ այդ անձինք ինքզինքնին ուղղած են։

ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՐՏՈՒՑ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Լ. Հէրըլտ կը ծանուցանէ թէ թէնպէքիի տարեկանքին դրամագլխոյ վերածման եւ երկաթուղեաց միացման ընկերութեան յատկացեալ տարեկանքին վերաբերեալ պարագայները կարգադրուած են այժմ։ Դրամագլխոյ վերածելի տարեկանքն է գրեթէ 125,000 օսմ. ոսկի։ Նոր ձեւով պարտք մը հաստատելու մտադրութիւն չկայ, այնպէս որ դրամագլխոյ վերածումը պիտի կատարուի 4 առ հարիւր եւ նոր բաժնեթուղթ՝ գործնականապէս՝ նման պիտի ըլլան Օսմանիյէ արժէթղթոց։ Այսպիսի կարգադրութեան մը համար նոր փոխառութիւն մը ընելու մտադրութիւն ալ չկայ այժմ։ Այդպիսի գործողութենէ մը պիտի գոյանար 3,120,000 օսմ. ոսկւոյ դրամագլուխ մը, որուն մէկ միլիոնը պիտի յատկացուէր երկաթուղեաց միացման ընկերութեան եղած պարտքին։

Մոնիթէօր Տէ Էնթէրէ Մաթէրիէլ, արտատպելով այն տեղեկութիւնն որ հրատարակուած էր օսմ. Հանրային Պարտուց դրամագլխոյ դեղչման վրայ, 1891 մարտ 13էն մինչեւ 1892 փետր. 17, բաղդատութիւն մը կ'ընէ այս ժամանակամիջոցի գլխաւճարին եւ 1890-91ի ամբողջ տարւոյն գլխաւճարին միջեւ։ Ահաւասիկ այդ բաղդատութիւնը.

	1890-91	1891-92
	Անգլ. ոսկի	Անգլ. ոսկի (11 ամիս)
Գլխաւճարի սովորական գումար	555,500	569,100
Գլխաւճարի արտասովոր գումար	346,800	758,600
Համագումար	902,300	1,327,700

Վերջին տարեշրջանին մէջ եղած յաւելուածութիւնը կ'արտայայտուի ուրեմն 425,000 ոսկւոյ յաւելմամբ մը, որոյ վրայ պէտք է բարդել ինչ գլխաւճար որ հատուցուի փետր. 17էն մինչեւ մարտ 12։

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Էրզրումի Նէվրէսի լրագրոյն մէջ կը կարդանք թէ Դատական Նախարարութիւնը Կարնոյ վերաքննիչ ատենի ընդհանուր դատախազին հաղորդած է կայս. Իրատէ մը որ կը հրամայէր Լէյլէի Ռաղայիպ տօնին առթիւ ազատ արձակել նահանգին բանտերուն մէջ գտնուող եւ իրենց պատժոյն երեք չորրորդ մասն աւարտող բանտարկեալներն, ի բաց առեալ անոնք, որոց համար հարկ է բացառութիւն մը ընել։ Ընդհանուր դատախազն, այս հրամանը ամեն կողմ հաղորդած եւ միւս կողմէ ոճիրով ամբաստանելոց նկատմամբ տարակուսի ներքեւ գտնուած ինչ ինչ կէտերու վրայ հրահանգ ուղած է Դատական Նախարարութենէն։ Տասը բանտարկեալք, որք իրենց պատժոյն երեք չորրորդ մասն աւարտած էին, ազատ արձակուած են։ Ասոնց 7ը վերաքննիչ ատենի պատժական ճիւղին կողմէ յանցաւոր եւ 3ն ալ կեդրոնական նախնական դատարանին կողմէ դատապարտուած էին։ Ազատ արձակեալք բարեմաղթութիւններ ըրած են վասն կենաց Վեհ. Սուլթանին։

— Դ. զօրաբանակին հրամանատար Զէքի փաշա եւ Վանայ Նոր կուսակալ Պահրի փաշա Երզնկայի մէջ տեսակցութիւն մը ունենալով, ինչ ինչ միջոցներ ձեռք առած են նոյն զօրաբանակի զինուորական բաժանմանց նկատմամբ։ Պահրի փաշա դէպ ի Վան ուղեւորեր է Կարնոյ ճամբով եւ յառաջիկայ շաբթուն այդ քաղաքը կը ժամնէ։

— Ըստ տեղեկութեանց Հաքիքաթի, Կարնոյ կուսակալութիւնն որոշած է որ տեղւոյն աղուխա պատրաստող արհեստաւորք իրենց արհեստն ի գործ դնեն քաղաքէն մէկ ժամ հեռու գտնուած Գիրդ Տէյիրմէն Պօղազը անուն տեղն, ուր գետակ մը կը հոսի, որովհետեւ այդ արհեստաւորք իրենց արհեստը քաղաքին մէջ ի գործ դնելով անասուններ կը մորթէին եւ այսպէս եղած գարշահոտութեամբ օդը կ'ապականուէր ու այլ եւ այլ հիւանդութիւնք յառաջ կուգային։

ՁԻՆԵՐՈՒ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ

Կայս. հրամանի մը համաձայն կազմակերպելի ցուցահանդէսն, ուր ի ցոյց պիտի դրուին Թուրքիոյ մէջ հասցուած ամեն տեսակ ձիեր, Քեաղըտխանէի շրջակայքն որոշուելիք տեղւոյ մը վրայ պիտի հաստատուի։

ՍՆԱՆԿՈՒԹԻՒՆ

[illegible] կը ծանուցանէ թէ Թիճարէթի ծովային դատարանին կողմէ Առեւտրական Սենեկին եղած պաշտօնական զեկոյցի մը համեմատ ներկայ փետրուար 11/23էն սնանկացեալ հրատարակուած է Նասիմ Զարա, ի Պոլիս, Թահթա-Գալէ, Պալթաճըլար խան թիւ 1։

ԻՍԼԱՄ ՈՒԽՏԱՒՈՐՔ

Այս առտու Թուրք լրագիրք կը ծանուցանեն թէ Կարնոյ ռուսական ընդհանուր հիւպատոսը յունվար 29 թըւականաւ Նահանգին կուսակալութեան հաղորդած է մայրաքաղաքիս ռուսական դեսպանատան մէկ պաշտօնագրոյ իմաստն, որուն համաձայն Մէքքէէն, Մէտինէէն և ընդհանրապէս Արաբիայէն ու Սուրիոյ նահանգէն և կամ Հնտախտ, ժանտախտ ու դեղին ժանտատենդ գտնուած տեղերէն՝ Անատոլուի ճամբով իրենց հայրենիքները վերադարձող ուխտաւորք և ուղեւորք, յետ այսորիկ պիտի ընդունուին Ռուսիոյ Պաթումի ու Երեւանի նահանգաց Ջուլֆա ու Պաքու քաղաքներն ուր քարանթինաներ հաստատուած են: Հետեւաբար Ռուսիոյ սահմանագլխին միւս տեղերը գնացողները չընդունուելով ետ պիտի դարձուին: Հիւպատոսն խնդրած է ծանուցանել զայս ամեն կողմ և ըստ այնմ հարկ եղածն ի գործ դրուած է:

ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆԻ ԱՐՏԱԾՈՒՄ

Ըստ տեղեկութեանց [illegible], Սամսոնէն և Օրտուէն եգիպտացորենի արտածման արգելքը վերցուեր է կայս. հրամանաւ:

ԹՈՒՐՔԻԱ ԵՒ ՌՈՒՄԱՆԻԱ

Պուքրէշի օսմ. դեսպան Պլաք պէյ՝ արտաքին գործոց Նախարար Սայիտ փաշային հաղորդած է օտար երկրաց հետ Ռումանիոյ առեւտրական յարաբերութեանց վիճակագիրն 1891 յունիս, յուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամսոց համար: Այս վիճակագիր Հանրօգուտ շինութեանց Նախարար Թէվֆիք փաշայի կողմէ Կ. Պոլսոյ Առեւտրական Սենեկին յղուած է, հետաքրքրուող անձանց տրամադրութեան ներքեւ դրուելու համար:

ՄԵՐ ԱՌՕՐԵԱՅ ՀԱՑԸ

Ուրախալի է իմանալ թէ կայս. կառավարութիւնը լուրջ ուշադրութիւն կ՚ընծայէ ալիւրի խնդրոյն եւ թէ տրամադիր է գործնական կերպիւ անով զբաղելու: Այս պահուս կը քննուին այս մասին եղած առաջարկներն՝ ամենքն ալ խոհութեանց վրայ հիմնուած, եւ յուսալի է որ ձեռնհաս իշխանութիւնք, որք գործին գլխաւոր կարեւորութեան վերահասու կ՚ըլլան, ինչպէս կ՚ընեն արդէն, հոգ պիտի տանին որ այս պահուս ի գործ դրուած մաքսային կարգադրութիւնք այնպէս մը կնքուին որ մայրաքաղաքիս ջաղացպան արհեստագործութիւնը չի կործանի, կործանում որ եթէ յոյժ հաւանական կարգ մը պատահականութեանց մէջ յառաջ գար, ժողովուրդը անօթութեան պիտի մատնուէր: Ութն առ հարիւր մաքսն ըստ արժէից, որ դրուած է թէ՝ ցորենին և թէ ալիւրին վրայ, աններկբայապէս վնասաբեր է տեղական ջաղացպան արհեստագործութեան, վասնզի ո և է կշռով ցորենը նոյն կշռով ալիւր չ՚արտադրեր: Հասարակ ալիւրին արտադրութեան մէջ անգործածելի մասը 26էն 28 առ հարիւր է, իսկ լաւ ալիւրինը 55 առ հարիւր: Ասկից կը հետեւի թէ աղալու համար ցորեն ներմուծող ջաղացպանը 8 առ հարիւր մաքս մը կը վճարէ 30էն 35 առ հարիւր անգործածելի մասին: Ցորենին վրայ 8 առ հարիւր եւ ալիւրին վրայ 12 առ հարիւր մաքս մը մօտ ի մօտոյ պիտի համապատասխանէր կացութեան պահանջմանց: Բայց նոյն համեմատութեամբք կշիռին վրայ դրուած առանձնայատուկ մաքս մը այս արդիւնքը չունենար, վասնզի ալիւր ներմուծողը ալիւրի անգործածելի մասին վրայ մաքս չպիտի ուզեր տալ և, ցորեն ներմուծողը ցորենի անգործածելի մասին վրայ մաքս պիտի վճարէր, այնպէս որ ցորեն ներմուծողը, ալիւր ներմուծողին հետ մրցման մտնելով, պարտաւոր է դէմ դնել անգործածելի մասին վրայ կրկին մաքսի մը, այսինքն, վճարելիք մաքսը և այն մաքսը զոր իր մրցակից չի վճարեր: Արդ, եթէ հարկ է առանձին մաքսեր դնել ցորենի և ալիւրի կշռոյն վրայ, պէտք չէ մոռնալ թէ 100 քիլոկրամ ցորենը միջին կերպով 65 քիլոկրամ ալիւր կ՚արտադրէ, այնպէս որ երկու մաքսերուն միջեւ առաջարկուած համեմատութիւնը, 11 1/2էն 6, եթէ ընդունուէր, տեղացի ջաղացպաններն յոյժ անպաստ դրից մէջ պիտի թողուր հանդէպ ալիւր ներմուծողներուն:

Ապառաջ ալիւրք շարունակ կը հասնին Միջերկրականի նաւահանգիստներէն: Վերջերս հասած ալիւրի նմոյշներ կան զորս տեսնելով կամ հոտոտալով անոնց անպէտ և ապականուած ըլլալն կ՚երեւի: Այս նմոյշներ մասնագիտաց յանձնուած են և մէկ երկու օրէն պիտի իմացուի թէ ինչ նիւթեր խառնուած են անոնց մէջ:

Այս ալիւրներուն պարկը 70 դրշ.ի կը տրուի, մինչ հասարակ ալիւրին մէկ պարկը 92 դրշ. կ՚արժէ: Արդ, այս ալիւրը —որ Կ. Պոլսոյ մէջ տեղական զուտ ալիւրէն հարիւրին 25 պակաս գինով կը վաճառուի— այն երկիրներէն կուգայ որք մեծաքանակ ալիւր կը գնեն Թուրքիայէ: Այս վերջին երկու խորհութիւնք բնաւ խօսք չեն վերցներ, և բաւական պերճախօս են՝ իշխանութեանց կողմէ արագ և հաստատ գործադրութիւն մը թելադրելու համար:

(Լ. Հէրալտ)

ԼԻՄՈՆԱՏ ԿԱՃԻՕՂ

Բժշկական ժողովը, կըսէ «Սապահ», որոշած է հարկ եղածն ի գործ դնել արգիլելու համար գունաւոր լիմոնատ կաճիօղներու վաճառումն իբրեւ վնասակար առողջութեան: Այս ամէն պատրաստուած ծըրագիրը մատուցուած է ձեռնհաս իշխանութեան:

ՕՍՄ. ԵՐԿԱԹՈՒՂԵԱՑ ՊԱՐՏԱԹՈՒՂԹՔ

Օսմ. Հանրային Պարտուց վարչութեան անգլիացի և ֆրանսացի բաժնետէրք եւս ընդունած են Ռումելիի երկաթուղեաց պարտաթղթերուն նոր կարգադրութիւնը:

ԹԱՂԱՊԵՏԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐ

Թաղապետութեան Զ. շրջանակի բժիշկ Տքթ. Մանուկ պէյ Աղասեան հիւանդ ըլլալով, այդ պաշտօնը փոխանորդաբար Տքթ. Սեղբոսեան էֆէնտի պիտի վարէ, ցապաքինումն Տքթ. Մանուկ պէյի:

ՑՈՐԵՆԻ ԳԻՆԸ

Եւրոպիոյ մէջ ցորենի գինը բարձրանալու վրայ է:

Միջերկրականի ֆրանսական նաւաբաժինն որ կը գտնուէր Ջիւանիոյ նաւահանգիստն, հինգշաբթի օր Պիրէոն ուղեւորած է:

—Ղալաթիոյ Քէմէր Ալթը Թաղը ֆրանսացիի մը փուռին մէջ աշխատող Խօժէն անուն գործաւոր մը, Բավլինա անուն վատահամբաւ կնոջ մը սիրահարուած ըլլալով, երէկ իրիկուն ինքզինքը ոտքէն վիրաւորեց մկրատի հարուածով մը:

—«Թարիգ» կը պատմէ թէ ոստիկանութեան պաշտօնեայք երէկ Գարաքէօյի կամուրջին վրայ Ֆէնէրի յունաց վարժարանի աշակերտներէն Ալէքսանդրոս անուն տղայ մը ձերբակալեցին, որ կամուրջէն անցած պահուն Մէճիտիյէի կեղծ քառորդ մը տուած էր:

—Արքունի Սըրմաքէշխանէի մէջ գտնըւող արհեստաւորք աղերսագիր մը մատուցանելով Բ. Դրան, յայտարարած են թէ իրենց արհեստին կայուն վիճակին պատճառաւ կարօտ վիճակի մէջ կը գտնուին: Բ. Դուռն եւս հրամայած է որոց որ անկ է յանձնաժողով մը կազմել ատոնց հաշիւները քննելու համար, յանձնարարած է կառավարական պաշտօնատանց գործ տալ նոյն արհեստաւորաց ինչպէս նաեւ կարգադրել նոյն պաշտօնատանց՝ Սըրմաքէշխանէին ունեցած պարտքերը: Նոյն հաստատութեան տնօրէնը փոխուելով ուրիշ մը կարգուած և ձեռնարկուած է հաշուոց քննութեան:

—Պելկրատի օսմանեան դեսպան Ֆէրիտուն պէյ, որ Նիս գնացած էր իւր անձը դարմանելու համար, այժմ Պելկրատ վերադարձած ըլլալով, նոյն դեսպանատան գործերը փոխանորդաբար վարող Ֆէթհի պէյ շաբաթ իրիկուն մայրաքաղաքս դարձաւ:

—Վճռաբեկ ատեանը վաւերացուցած է Եղեռնադատ ատենի այն որոշումն, որով Սալօմոն ու Խալիլ անուն անձերը տասնեւհինգական տարուան շղթայակապ աշխատութեան դատապարտուած էին: Այս անձինք ի Պալաթ գիշերանց զէն ի ձեռին Կարապետ անուն կօշկակարի մը վրայ յարձակելով վիրաւորած ու բռնութեամբ կողոպտած էին զնա:

—Նախընթաց օր ի Գումգաբու, կատաղած շուն մը երեք անձեր խածած ըլլալով, որոց մին փոքր աղջիկ մը, շունը սպաննուեցաւ և ղրկուեցաւ բժշկական վարժարանը, հաստատելու համար թէ կատղա՞ծ է թէ ոչ:

—Բաղչէճին կը գրեն թէ շրջակայից մէջ անընդհատ ձիւն կը տեղայ, թէ ձիւնին բարձրութիւնը մէկուկէս մեթրի հասած է և թէ ճամբաները գոցուած ըլլալով թղթատարական հրթեւեկութիւնք դադրած են:

ՆՈՐ ԹԱՏՐՈՆ ՖՐԱՆՍԱԿԱՆ

ԲԵՐԱՅԻ

Վաղը գիշեր դեսպանական երեկոյթ: Ի խնդրոյ հասարակութեան պիտի ներկայացուի,

ԼԱՆՖԱՆ ԲՐՕՏԻԿ
L'ENFANT PRODiGUE

* * *

Հինգշաբթի գիշեր՝
ԼԱ ՖԱՎՕՐԻԹ (LA FAVORITE)
Մասնակցութեամբ Բարիզի Օբէռային թէնօրներէն Պ. Տէրէյսի:

ՀԵՌԱԳԻՐ

ՍՈՖԻԱ, 5 մարտ.—Տոքթ. Վուլքովիչի համար այս առաւօտ հոգեհանգիստ կատարուեցաւ մայր եկեղեցւոյն մէջ. Ներկայ էին Քլէմանդին իշխանուհին, Նախարարք, Սթամպուլոֆէն զատ որ հարբուխ եղած է, դեսպանական և հիւպատոսական մարմինը, Պելժիոյ դեսպանէն զատ որ հիւանդ է, օսմ. գործակատարութեան փոխանորդը քարտուղարներով միասին, զանազան դաւանութեանց հոգեւոր պետերը, քաղաքային և զինուորական պաշտօնատարք, քաղաքին երեւելիք և բազմաթիւ անձինք:

ՊԵՐԼԻՆ, 5.— Կառավարական պաշտօնաթերթը կ՚ըսէ թէ կայսրը գոհունակութիւն յայտնած է ոստիկանութեան՝ բռնած խոհեմ և ազդեցիկ ընթացքին համար: Ռայխսթակը վիճաբանելով 500,000 մարքի գաղտնի վարկերուն վրայ արտաքին գործոց նախարարութեան համար, նախարարապետ կոմս Գափրիվի յայտարարեց թէ 1892 ապրիլ 1էն սկսեալ կայսրութիւնը բան մը չընդունիր Հանովէրի Թագաւորութեան գըրաւեալ ինչքէն և թէ այս գումարներու խնդիրն օրինապէս պիտի կարգադրուի ի մօտոյ: Արտաքին գործոց նախարարութեան գաղտնի վարկերը շնորհուեցան:

ՓԱՐԻԶ, 5.—Լրագիրք մեծաւ մասամբ կը յայտնեն թէ, հակառակ Երեսփ. ժողովոյ մէջ ձեռք բերուած մեծամասնութեան, արդի նախարարութիւնն երկար չպիտի տեւէ. կը հաստատեն սակայն թէ Պ. Լուպէի համարձակ ընթացքը լաւ տպաւորութիւն յառաջ բերած է:

ՓԵՇԹԱ, 5.—Ունկարիոյ Բաւէտիթպանք դրամատունը 1891ին 1,460,927 ֆիօրին զուտ հասոյթ արտադրեց և առ մէկն մի բաժնեթուղթ 19 ֆիօրին շահ պիտի տայ:

ՓԱԼԵՐՄՕ, 5.—Համալսարանին վերաբացումը տեղի ունեցաւ կանոնաւոր եղանակաւ:

ԱԹԷՆՔ, 5.—Պ. Տէլիեանիսի կուսակցութենէն 30 երեսփոխանք որոշեցին ծանուցանել Թագաւորին թէ ուժ կուտան նոր կառավարութեան, եթէ կարող ըլլայ պատասխանել կացութեան պիտոյից:

ՏԱՆՃԻԿ, 5.—Երէկ, 220 անձինք շոգենաւով պիտի փոխադրուէին հանրութեան արտօրայքն՝ աշխատելու համար. 800 հոգի ներկայացան նաւամատոյցն, հետեւապէս մեծ մասը պարտաւորեցաւ մնալ:

ՎԻԷՆՆԱ, 5.— «Փոլիթիշէ Քորէսփոնտէնձ» կիմանայ թէ ծանր անկարգութիւններ տեղի ունեցեր են ի Թոպոլք և թէ Կալիցին իշխանը հոն ղրկուեր է անսահման իշխանութեամբք:

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ

ՓԵՇԹԱ, 6 մարտ.— Էթիէն Սաքի քըսանհինգամեայ կինը, որ երեսփոխան էր և որդին կրօնական գործոց նախարարին, իր ծնողաց տան մէջ բէվոլվէրով անձնասպան եղաւ անծանօթ պատճառներով:

ՎԻԷՆՆԱ, 6.— Կայսրուհին Միրամար ուղեւորեցաւ:

ԱԹԷՆՔ, 6.—Տէլիեանիսի կուսակից երեսփոխաններէն մէկ քանին ընդունելով որք բաժնուած են իրենց խմբակէն, Թագաւորը շնորհակալութիւն յայտնեց իրենց հայրենասիրական որոշման համար եւ յոյս յայտնեց թէ իրենց աջակցութեամբ պիտի կարենայ երկիրը դուրս հանել դժուարին կացութենէն յոր կը գտնուի: Աւելցուց թէ իր առաջարկներ Յունաստանի բարօրութիւնը ապահովելու միտ կը միտին.— կարծիք կայ թէ այս երեսփոխանաց ընթացքը, ընդհակառակը, կնճռոտած է կացութիւնը.

ՏԱՐՄՇՏԱՏ, 6.— Հէս-Տարմշտատի մեծ դուքսը երէկ կաթուածահար եղաւ մարմնոյն աջ կիսուն վրայ. մտային կարողութիւնները չի խանգարուեցան:

—Մեծ դուքսին վիճակը գէշցաւ, այսինքն թէ իմացական կարողութիւններն ալ տկարացան և երկիւղալի ախտանշաններ կ՚երեւին շնչառական գործարանաց մէջ:

ՊԵՂԿՐԱՏ, 6.— Սքուբշինան 50,000 ֆրանքի գումար մը քուէարկեց պուլկար սահմանագլխոյն մօտ նոր վարժարաններու հաստատման համար:

ՓԱՐԻԶ, 6.— Ֆրանսական Կաճառին անդամ Ժիւրիէն տը լա Կռավիէռ գեր-ծովակալը մեռաւ:

ՔՐԻՍԹԻԱՆԻԱ, 6.—Արգիլուեցաւ Գերմանիոյ բոլոր նաւահանգիստներէն ձիու և խոզի ներմուծումն ի Նորվեկիա:

ՓԵԹԵՐՍՊՈՒՐԿ, 6.—Կէս պաշտօնական հիւս. գործակալութիւնը սխալ կը յայտարարէ այն զրոյց թէ քավաք Իվանոֆ սպանիչն է եղեր Տոքթ. Վուլքովիչի: Իվանոֆ, որ երկու ամսէ ի վեր Օտեսա հաստատուած է, անկէց ի վեր հեռացած չէ նոյն քաղաքէն:

Սակարան

ԳԱԼԱԹԻԱ, 24 փետրվար

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿԱՑ

3 ամիս Լոնտոնի վրայ		109 3/4
3 » Փարիզի »		22 95

Օսմանեան Քոնսոլիտէ

Երէկ երեկոյ գոց. [Միութ. Դ. Սէրի]		20 34
Բորսայի մէջ	»	— —
Առաւօտուն բացուեցաւ		20 33
Կէս օրին		20 34 1/2
Թահվիլ-ի Օսմանիէ երէկ երեկոյ		76 25
» » ժամ 5ին		— —

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԷԹՂԹՈՑ

Փոխառութիւն	Սէրի Ա.	45 50
»	» Բ.	26 87
»	» Գ.	20 33

ԲԱԺՆԵԹՈՒՂԹՔ

Օսքէյէթ ֆէներալ	Անգլ. Լ.	4 10
Քրէտի ֆէներալ	» »	7 12
Պանք տը Գոնս.	» »	4 14
Սօս. Ճէնէ. է վալէօր	» »	4 14
Ռէժի	» »	15 30
Թրամուէյ	» »	612
Ռումէլիի երկաթուղի	Ֆր.	73 1/4
Բաժնեթուղթ Լոմպարտի Գ. Կ.		108

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՅ

Օսմանեան ոսկի	դրշ.	100
20 Ֆրանքնոց	»	87 14
Անգլիական ոսկի	»	109 39
Մարք [Գերմանական ոսկի]	»	107
Իմբէրիալ	»	89 25
Քրիմէց	»	51 12
Ռուսաց թղթադրամ	»	8 91
Մէճ. արծաթ [տասը.]	»	108 12
Ծանր արծաթ	»	102 70
Մէճիտիյէ	»	99
Թաւֆիքէ	»	21
Տօկոս Գալաթիոյ Սակարանի	»	7

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

ՓԱՐԻԶ, 5 Մարտ

Ֆրանսական Ռանթ 3 %	96 70
» » 4 1/2 %	105 20
Օսմանեան քոնսոլիտէ Սէրի Դ.	19 15
» երկաթուղի	73 87
» Ռէժիի բաժնեթուղթք	357 50
Պանք Օթօման	536 87
Սօսիէթէ ժէնէրալ	— —
Քրէտի Լիոնէ	785
Իտալական Ռանթ 5 %	87 75
Պրէօրիթէ Թիւրք (1890)	420
Եգիպտական միացեալ	483 12
Օսմ. Մաքս. արժէթուղթ	435
Օսմանիյէ (Օսմանեան քոնսոլիտէ)	352 50
Չէք Լոնտոնի վրայ	25 22

ԼՈՆՏՈՆ, 5

Անգլ. քոնսոլիտէ	95 87
Օսմ. » Սէրի Դ.	19
» » » Ա.	45 50
» » » Բ.	26 87
» » » Գ.	19
Փոխառութիւն 1877	— —
Պանք Օթօման	11 31
Եգիպտական միացեալ (Ունիֆիէ)	95 37
» առանձ. (Փրիվիլէժ) 1890	89 62
Տօմանիալ (փոխառ. Ռոշիլտ)	102 25
Ռուսական 1890	93 43
Վառնայի երկաթուղի	21 1/2
Սալոնիկի երկաթուղի	14 1/2
Փոխանակութիւն Փարիզի վրայ	25 380

ՎԻԷՆՆԱ, 5

Օսմանեան երկաթուղի	38 25
» Ռէժիի բաժնեթուղթք	164
Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	118 95
» Փարիզի »	47 05

ՊԵՐԼԻՆ 5

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	20 235
» Փարիզի »	81 85
Ռուսաց թղթադրամ	206 20
Օսմանեան երկաթուղի	77 10
Օսմ. քոնսոլիտէ Սէրի Դ.	48 70
Օսմ. Ռէժի	179 50

ԲԱՐԻԶ ՓԹԻԹ ՊՈՒՐՍ

ԲԱՐԻԶ, 5

Ֆրանսական Ռանթ 3 %	96 20
Օսմանեան քոնսոլիտէ Դ.	19 18
Օսմանեան երկաթուղի	73 87
Օսմ. Ռէժի	357 50
Պրէօրիթէ Թիւրք	— —
Օսմ. Մաքս. արժէթուղթ	— —
Պանք Օթօման	537 81
Օսմանիյէ	— —

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Համայն Գում-գաբու՝ իր միացեալ Թաղերովն՝ արժանաւորապէս ներկայացուած էր երէկ ի Նոր Թատրոն, ուր քիչ տեղ կը մնար Բերայի ընտանիքներուն: Ներկայացման զուտ մարդասիրական նպատակը, խաղին ընտրութիւնը, Կարգադիր Մասնախումբին ջանքերն եւ Վսեմ. Նուրեան էֆէնտիի հովանաւորութիւնը՝ ի մի եկած, յաջողութեան լաւագոյն հաւաստիքը կընծայէին արդէն, որ և իրականացաւ: Մնակեան խումբը, վերջին տարիներս, Բերայի Թատերաբեմերուն վրայ շատ քիչ անգամ երեւցած էր այսքան հոծ բազմութեան մը առջեւ.—ո՛չ մէկ օթեակ, ո՛չ մէկ թիկնաթոռ կամ նստարան կը մնար պարապ, իսկ «բարատին» աւելի քան լեցուն, եթէ կարելի է այսպէս ըսել:—Սրահին այս երեւոյթը բաւական էր ինքնին կենդանութիւն մը, ներշնչում մը տալու այն փոքր դերասանաց որք յաճախ իրենց արուեստն ալ կը մոռնան, իրենց դերն ալ՝ երբ դատարկ օթեակներ ու թափուր սրահ մը կունենան իրենց հանդէպ: Երէկ, ընդհակառակն, խումբին հին անդամներն՝ իրենց արուեստագէտի կենաց էն փայլուն օրերու յիշատակաւն ոգեւորեալ՝ տեսակ մը հաճոյքով, գուրգուրանքով կը կատարէին իրենց դերեր:

Ժամ ութին, ֆրանսական խումբին նուագածուք հնչեցուցին կայս. Համիտիէ քայլերգը, որ ունկնդրեցաւ յոտնկայս ու ծափահարեցաւ, ապա սկսաւ ներկայացումը:

ՄԵՐ ՁԱԽԱԿՆԵՐԸ ընտանեկան պարզ տռամ մըն էր, ցոյց տուող թէ շատ կը սըխալին այն ծնողք՝ մանաւանդ մայրեր, որք կուզեն ընտանի յարկին տակ պահել ու դաստիարակել իրենց զաւակներ, խորշելով վարժարանաց մթնոլորտէն ու դպրոցական կեանքէն: Այս կերպով մեծցած էին Կաղէլար կոմսուհւոյն երկու զաւակներն՝ Լիւսիէն և Մաթիլտ՝ որք փորձանքներու շարք մը եղան իրենց ծնողաց գլխուն. երիտասարդը՝ պարկեշտ ընտանիքի մը պատիւն աղարտելով ու մօրն ադամանդները գողնալով, ու քոյրը դաշնակի դասատուին սիրահարուելով: Բարեբաղդաբար, կոմսը՝ որ իր կնոջը համակարծիք չէր եղած զաւակաց դաստիարակութեան ձեւի մասին, անոր յամառութեան այս յոռի հետեւանքը տեսնելով՝ փութաց քիչ շատ դարմանել ամեն բան: Առանց բնաւ իր պաղարիւնութիւնը կորսնցնելու տագնապալից վայրկեաններու մէջ, գեղեցիկ տեսութիւններ ու համոզիչ խօսքեր կը գտնէր: Վերջին արարուածին՝ երբ իր գերդաստանին անունը փրկելու համար՝ կ՚առաջարկէր աղքատ աղջկան մը,—որուն զաւակին հայր եղած էր իւր որդին ու յետոյ զայն լքած,— ընդունիլ անոր ձեռքը, ապրող մարդու մը շեշտերով կըսէր.— «Կնոջ մը կեանքը, աղջիկս, սա երեք բառին մէջ կը կայանայ. սիրել, տառապիլ, ներել. դուք սիրեցիք ու տառապեցաք, հիմայ ալ ներեցէք»: Բայց Մարկրիտ, այդ աղքատ աղջիկը, —հին ժամանակներու դիւցազնուհի մը,— դարձեալ մերժեց զինքը խաբող դերակոմսին ձեռքն, արհեստաւորի մը հետ ամուսնանալու համար, որ իրեն պաշտպան կը կանգնէր: Հայր Ժէռօ, Մարկրիտի հայրը, ինքն ալ մինչեւ վերջը գիտցաւ պահել՝ կեանքի գիտակցութիւն ու պատուոյ զգացում ունեցող աղքատ հօր մը վիքքն ու շեշտը: Մէկ խօսքով, յափութեան ու մաքուր սիրոյ, ներողութեան ու առաքինութեան, հարստութեան ու աղքատութեան մրցումն էր ամբողջ խաղը: Հարկ չկայ ըսել թէ ո՛րն յաղթական ելաւ . . . Թատերաբեմին վրայ:

Պ. Պ. Մնակեան և Սիսակ սքանչելապէս կատարեցին Հայր Ժէռօի ու Կաղէլար կոմսին դերերը: Մանաւանդ Պ. Մնակեան կրցաւ ցոյց տալ թէ իւր քննադատեալ չափազանց գործունէութիւնը մոռցունել տըւած չէ իրեն՝ արուեստին նրբութիւնները: Տիկին Հէքիմեան, որ այնքան լաւ կ՚ստանձնէ լալու և լացնելու դերեր, յուզիչ կերպով կը ներկայացնէր զՄարկրիտ: Տիկին Սաթինիկ (Կաղէլար կոմսուհին) հակառակ դերի մը մէջ, բաւական զայրոյթ գրգռեց իր դէմ՝ հանդիսականաց դիւրագրգիռ մասին մէջ, ինչ որ յաջողութիւն մըն էր այդ դերասանուհւոյն համար որ հեզահեճ կը կատարելագործուի: Օր. Ազնիւ, և Պարոնայք՝ Ալիքսանեան, Եաղըճեան ու Պինէմէճեան դժգոհ չթողուցին հանդիսականները: Պ. Մաթթէոսեան շատ գնահատուեցաւ մանաւանդ կատակերգութեան մէջ: Ջերմագին ծափահարութեանց հետ, ծաղկեփունջ մը նուիրուեցաւ առ Պ. Մնակեան և տիկին Հէքիմեան:

Կարգադիր Մասնախումբն՝ աջակցութեամբ Գում-Գաբուցի ազնիւ երիտասարդաց խումբի մը, հանդիսականաց ընդունելութեան եւ այլ ամեն կարգադրութեանց հսկեց՝ ներկայացման սկիզբէն մինչեւ վերջը, առանց բնաւ յոգնած ըլլալու այն աշխատութիւններէն զորս երկու շաբաթէ հետէ նուիրած էին ներկայացման արդիւնաւորման համար: Կը կարծուի թէ 120 ոսկւոյ չափ զուտ հասոյթ գոյացած ըլլայ:

Կարգադիր Մասնախումբն կող՝ է պատգամաւորութիւն մը յատկապէս շնորհակալութիւն յայտնելով առ Վսեմ. Նուրեան էֆէնտի, որ ո՛չ նուազ սատարած էր այս մարդասիրական ձեռնարկին յաջողութեան, երկու ծաղկեփունջ նուիրեց առ Տիկին Նուրեան:

ԴԻՏԱԿ

«ՄԱԼԱԿԻԱ» ՇՈԳԵՆԱՒՆ
ԵՒ ՀԱՅ ՆԱՒԱՊԵՏ ՄԸ

Արեւելքի անցեալ համարներէն մէկուն մէջ գրած էինք Մալակիա շոգենաւի մասին, զոր գնած է Ռուսահայ յայտնի փաբրիկան Պ. Ա. Մանթաշեանը: Սոյն շոգենաւը Մեծ. Գավաֆեանի շոգենաւային գործարանի մէջ իւր յատուկ հսկողութեան ներքոյ ամբողջ երկու ամիս նորոգուելէն վերջ, անցեալ օր, սպիտակազարդարուած նորահարսն, դուրս ելաւ աւազանէն և չորեքշաբթի կէս օրէն վերջ ճանապարհ ընկաւ դէպ ի Բաթում, նաւապետութեամբ հայազգի Պ. Կոստանտին Վարձելեանի: Մալակիայով մէկտեղ երեք շոգենաւի տէր կը դառնայ Պ. Մանթաշեանը: Սակայն վերջին շոգենաւն իւր կազմութեամբ, մեքենաների կատարելութեամբ և մեծութեամբ ու գեղեցկութեամբ համարձակ կերպով կարող է մրցել ռուսական հսկայ ընկերութեան ամենալաւ շոգենաւերի հետ: Ռուսական շոգենաւուց ընկերութեան հսկայ անունը տալով թող չկարծուի թէ նա հսկայ ծնունդ ունեցաւ: Հետաքրքրողը թող դիմէ այդ ընկերութեան պատմութեան, համոզուելու համար, թէ նա եւս սկզբնաւորում մի քանի խարխուլ շոգենաւերով սկսեց իւր գործունէութեան նախաքայլը: Յիշատակելով այն խօսքը միայն ունինք Պ. Մանթաշեանի առեւտրական գործունէութիւնը ներկայացնել որպէս քաջալերիչ օրինակ մերազնէից, որք Մանթաշեանի հաւասար և դեռ նրանից աւելի դրամագլուխ ունենալէ զկնի, շատեր չունին նրա առեւտրական հեռատեսութիւնն ու տաղանդն՝ առանց որոց առեւտրականութիւնը կը փոխվէ լոկ միջնորդութեան, եթէ չասենք չարչիութեան: Կարելի չէ չնկատել, որ դեռ մօտիկ անցեալում Կ. Պոլսի առեւտրականութիւնը կեդրոնացած էր հայերի ձեռքում, այն ինչ այժմ ոչ միայն երկրորդ ու երրորդ, այլ և չորրորդ տեղը չեն գրաւում:— Ի՞նչու:— Այս հարցի պատասխանը թերեւս վիրաւորէ մեր ինքնասիրութիւնն և առեւտրականութեան մէջ ունեցած մեր պատմական համբաւոյն դպչէ, այնու ամենայնիւ տխուր ճշմարտութիւնը սա է թէ, հայերիս առեւտրական յետադիմութիւնը սկսի զարկաւ այն ժամանակ, երբ ճանապարհների հաղորդակցութիւնները դիւրանալով, եւրոպացիք առեւտրական նոր սիստեմով, մտան Կ. Պոլիս: Սոցա օրինաւոր մրցման առաջ նահանջեց հայի տոհմային առեւտրական տաղանդը:

Սոյն խնդիրն իւր բազմակողմանի օգտակարութեամբ այնքան հետաքրքիր է, որ տեսականը միայն բացատրելու համար հարկաւոր է ձեռնհասութիւն և խորին ուսումնասիրութիւն: Սակայն սոյն տողերով միայն ունինք մեր հարուստ դրամատէրերի ուշադրութիւնը հրաւիրել նրա գործնականի վրայ և այդ գործնականը կարող է համարուիլ Պ. Ա. Մանթաշեանը, որի սեփական երեք շոգենաւերը ամենայն շքեղութ յաջորդաբար մտնելով Վոսփորի նեղուցը և անցնելով Մարմարայէ անդին, իւրեանց տիրոջ գործարանի քարիւղով ողողում են Ցաճկաստանի հաղորդակցութեան յարմար քաղաքաց հրապարակները ջախջախիչ կերպով մրցելով Ամերիկեան քարիւղի դէմ:

Հիմայ դառնանք Մալակիայի նաւապետին:

Որքան հետաքրքիր օրինակ կարող է հանդիսանալ Պ. Մանթաշեանի գործունէութիւնը առեւտրական ասպարիզում, նոյնքան և դեռ աւելի լաւ օրինակ է նրա երիտասարդ նաւապետը մեր փափկասէր և փափկաճաշակ երիտասարդութեան համար:

Կ. Կոստանդին Վարձելեանը բուն Տփխիսեցի է: Նա ուրիշ ասպարեզներում եւս կարող էր աւելի հանգիստ և նախանձելի վիճակ ձեռք բերել ու չինովնիկների հետ վայելել իւր կեանքի ոսկի ժամերը,— միայն այդ նա չուզեց: Մանկութիւնից մտնելով նաւաստիութեան, սկսեց սիրել ծովը եւ այդ տաժանելի ու վտանգաւոր գործի բոլոր դժուարութիւններին յաղթելով, վերջապէս յաջողեցաւ երկրորդ նաւապետի աստիճան ստանալ Կասպից ծովի վրայ: Ապա մտաւ Պ. Մանթաշեանի շոգենաւը, նոյն պաշտօնով, ուր յաջողութեամբ ծառայելով եւ իւր տաղանդով, ճարպիկութեամբ ու հըմտութեամբ գրաւելով Պ. Մանթաշեանի հաւատքն ու վստահութիւնը, մի քանի ամիս առաջ նշանակուեցաւ նաւապետ [illegible] շոգենաւի, իսկ յետոյ Մալակիայի նաւապետութիւնը յանձնըւեցաւ իրեն: Գէթ Սեւ ծովու վրայ Պ. Կ. Վարձելեանը առաջին հայ նաւապետն է, չնայելով որ ծովի ափին ծնած ու ծովի մէջ մեծցած Պոլսոյ հայ երիտասարդները եթէ յանձն առնէին թողնել գրագրութեան նման հանգիստ բայց ոչինչ ապագայ խոստացող պարապմունքը և ուշ դարձնէին ծովային զանազան պաշտօնների ու պարապմունքների վրայ, այսօր մէկի տեղ մենք կունենայինք տասնեակ նաւապետներ, որով կարող էինք պարծենալ, թէ և այդ ճիւղի մէջ ընդունակ ենք:

Ինչպէս հաստատ աղբիւրից տեղեկացանք, Պ. Մանթաշեանի Պոլսոյ ընդհանուր փոխանորդ Պ. Հ. Շըլխեանը առանձին կարգադրութիւն է արած, որպէս զի Մալակիայի առաջին մուտքը Բաթումի նաւահանգիստը, կատարուի պատշաճաւոր ընդունելութեամբ:

ՆԱԽԱՆՁԱԽՆԴԻՐ

Կ. Պոլիս, 1892 փետր. 20

Հրատարակուեցան 35, 36, 37երորդ թերթերն Սիմոն Գաբամաճեանի ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ ԲԱՌԱՐԱՆԻՆ:

Ամբողջ գործը պիտի բաղկանայ 45 թերթերէ (720 էջերէ):

Բաժնեգինն է 15 դահեկան:

Դիմել առ հեղինակն, ի Կ. Պոլիս, Խաքի-Ջամիթէ, Պերպէրեան տպարան:

ԻԼԱՆ

ԽԱԶԻՆԷԻ ԽԱՍՍԱՅԻ ՇԱՀԱՆԷ

Խազինէի Խասսայի Շահանէ իչին ալընաճագ Թավուգ, բիլիճ վէ սայիրէնին գարարը գաթիսի Շուպաթը Ռումինին երմի ալթընճը չարշէնպիհ կիւնիւ միւբիլէճէկլինտէն, թալիպ օլանլարըն եէվմի մէզքիւրտէ սաաթ ալթըտան նիհայէթ թօգուզա գատար Խազինէի Ճէլիլէի միւշարիւլէյհայէ պուլունմալարը իլան օլունուր:

Լ 22 Շուպաթ 307 1—3

ՊԱԶԸ ՍԻՐԱՍԷՐԻ

ԻԼԱՆ

Միւպայեա օլունաճագը էվվէլճէ իլան գըլընան 100,000 գըյէ չէքէրին պէհէր գըյէսի ճէտիտի 92 փարատա թալիպի էօհտէսինտէ օլուպ շուպաթը Ռումինին 26ճը չարշէնպիհ կիւնի գարարը գաթիյի վիրիլէճէկինտէն իթտաընա թալիպ օլանլարըն մազամը վալայի Սէրասկէրի լէվազըմաթ տայրէսինէ միւրաճաաթ էյլէմէլէրի.

Նօ. 22 1—3

Թարապլուսը Ղարպտէ պուլունան իտարէի ասկէրիյէ փապրիքասը իչիւն 308 սէնէսինէ մախսուսէն մահալինճէ մէվգըի միւնագասայէ գօնուլան 500 թօնէլաթօ քարտիֆ մատէն քէօմիւրիւնին պէհէր թօնէլաթօսը 115 գրուշտա մահալի թալիպի էօհտէսինտէ օլտուղընտան պուրաճա իթտաընա թալիպ օլանլար թարիխը իլանտէն իթիպարէն պիր հաֆթատա գատար մազամը վալայի Սէրասկէրի լէվազըմաթը ումումիյէ տայրէսինէ միւրաճաաթ էյլէմէլէրի.

Շէրէֆ հուլուլը միւթէզաքքիւ օլան չէհրը Ռամազանը Շէրիֆտէ ճիւմուտը ճէնապը Շահանէյէ իֆթարիյէ օլարագ վիրիլմէք իւզրէ միւպայեասը մէվգըի միւնագասաեա վազ խիլին 30,000 գըյէտէն 40,000 գըյէյէ գատար 4 նէվ րէչէլին պէհէր գըյէսի 4 գրուշ 10 փարատա թալիպլէրի էօհտէսինտէ օլուպ, իչպու Շուպաթը Ռումինին 26ընճը չարշէնպիհ կիւնիւ գարարը գաթիյի վիրիլէճէք իսէ տէ իսթէնիլէն բէնճէնիպիհ կիւնիւ 100տէ 5 թէնզիլի գապուլ խիլէճէկլինտէն ֆիյաթը մէզքիւրէտէն թէնզիլաթ իճրասը իլէ մէզքիւր էլ միգտար րէչէլին իթտաընա թալիպ օլանլարըն մազամը վալայի Սէրասկէրի լէվազըմաթը ումումիյէ տայրէսինէ միւրաճաաթ էյլէմէլէրի.



ՅՈՎՀ. ՏԻՐԱՑՈՒՐ ԵՒ ԸՆԿ.

ՊԱՀՃԷ-ԳԱՓՈՒ, ՄԷՐՃԱՆՕՖ ԽԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԱՊՐԱՆԱՑ

Ամէն տեսակ լուսանկարչական մեքենաներ և գործիք, Անգլիական և Գերմանական Օպժէքթիֆներ, զանազան թուղթ, Անթուան Լիւմիէրի չոր բլաքներ, խիմիական նիւթեր, եւն. եւն.

PHŒNIX FIRE OFFICE

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԱՆԳՂԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՈՅԹ Անգղ. Ոսկի 1,000,000

«ՖԻՆԻՔՍ»

Հիմնեալ ի Լոնտոն յամին 1782

ՓԻՆԻՔՍ, հիմնեալ առաւել քան մի դար յառաջ, սոսկ հրդեհի ապահովագրութեան ընկերութիւն մ'է՝ որոյ բաժնետէրք Անգղիոյ ամենահարուստ և համրաւանօք դրամատէրքն են՝ ունենալով անսահման պատասխանատուութիւն։

ՖԻՆԻՔՍ ընկերութեան աշխարհահռչակ առատաձեռնութեան մի գլխաւոր ապացոյցն է 18,000,000 Անգղ. ոսկւոյ գումարն զոր ցարդ վճարած է հրդեհի վնասուց համար։ 11

ՖԻՆԻՔՍ ընկերութիւնն կ'ապահովագրէ ընդդէմ հրդեհի և կայծակի՝ կալուածք, կարասիք և ապրանք՝ յոյժ նպաստաւոր պայմանօք և մեծագոյն դիւրութեամբ սակագրելոցս, որք ունին լիագոր իշխանութիւն [illegible] ապահովագրելոց կրած վնասներն։

Հ. ՍՈՒԼԱՆ և ԸՆԿ. ընդհ. գործակալք Կ. Պոլսոյ, Պուլկարիոյ և Սեւ ծովու եզերց Թիւ 11 և 12, Սանտալճը խան, Ղալաթիա, Աւստրիական Թղթատան վերեւ.

HAMBURG MUNICH UNITED

ՀԱՄՊՈՒՐԿ եւ ՄԻՒՆԻԽ

ՄԻԱՑԵԱԼ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

Դրամագլուխ	Ֆրանք 8,000,000
Պահեստի դրամ ցվերջ յունիս 1890	› 6,165,860
Տարեկան հասոյթ › › ›	› 14,135,925

Ընկերութիւնքս ՓՈԽԱԴԱՐՁ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ կ'ապահովագրեն մթերանոցներ և բնակութիւններ և սոցա մէջ գտնուած վաճառքներ և կարասիներ խիստ չափաւոր սակագնօք

Լիագօր ներկայացուցիչ Կ. Պոլսոյ

ՖՐԱՆՔՖՕՐԹՈՒԱԶ

ԾՈՎԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Դրամագլուխ Ֆրանք 6,250,000 Պահեստի դրամ Ֆրանք 4,270,300

Ընկերութիւնս կ'ապահովագրէ շոգենաւուց և առագաստանաւուց վրայ բեռցուած վաճառքներ, ինչպէս նաև Թղթատարական և փոխադրական ընկերութեանց յանձնուած թանկագին նիւթեր և դրամ պարունակող ծրարներ խիստ նպաստաւոր պայմանօք և սակագնօք։ Նոյն նիւթերու վրայ մեծաքանակ գումարներ կարենալ ապահովագրելու համար Ըն[illegible] միացած է եւրոպեան 13 լուրջ ապահովագրական հաստատութեանց հետ որոց դրամագլուխն ու պահեստի դրամն է Աւելի քան 100,000,000 Ֆրանք

Լիագօր ներկայացուցիչ համար Թուրքիոյ

ԳԱՌՆԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ, Պոլիս, Պահչէ-Գաբու, Անանիատիս խան 12, 13, 14. 16

ՕՇԱՐԱԿ եւ ԽՄՈՐՈՒԿ

AUBERGIER

Լագթիւգարիոմով

ՀԱԶ ՀԱՐԲՈՒԽ ՑՆՑՂԱՏԱՊ

Հաւանութեամբ Բարիզի բժշկական Ակադեմիային

Ընդդէմ ԹՈՔԵՐՈՒ եւ ՑՆՑՈՒՂՆԵՐՈՒ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ, կը հանդարտէ ՀԱԶԸ, կը վանէ ՔՆԱՏՈՒԹԻՒՆԸ

ԿԸ ԳՏՆՈՒԻ ԱՄԵՆ ԴԵՂԱՐԱՆԱՑ ՄԷՋ

ՓԻՆԹՕ ԱՄՐԱՄ ԵՒ ԸՆԿ.

Փինթօ Ամրամ և Ընկ. վաճառատունը պատիւ ունի ծանուցանել մայրաքաղաքիս եւ նահանգաց կօշկակար արհեստաւորաց թէ իր խանին մէջ (Փինթօ Ամրամ խան) ի Պոլիս, Սուլթան-Համամ, հաստատած է մեծ մթերանոց մը Հառգոսի եւ Միտիլլիի մեծ գործարաններէն ելած քէօսէլէներու։

Միեւնոյն վաճառատան մէջ կը գտնուին Ֆրանսայի եւ Իտալիոյ լաւագոյն գործարաններէն ելած ամեն տեսակ կաշի՝ կօշիկներու շինութեան համար։

Փինթօ Ամրամ և ընկ. վաճառատունը, երկար ժամանակէ հետէ հանրածանօթ այս տեսակ գործոց մէջ, կարող է պատասխանել ամեն պահանջմանց իր բազմաթիւ յաճախորդաց որք այնքան լիուլի վստահութեան ապացոյցներ տուած են իրեն։

ԵՌԱՑԵԱԼ ԱՆԹԻԲԻՈՒՆ

ԼԸ ԲԷՏՐԻԷԼԻ

ԸՆԴԴԷՄ ԳԼԽՈՅ ՑԱՒԵՐՈՒ, ԾՈՎԷ ԲՌՆՈՒԿԼՈՒ

ԳԵՐԱԶԱՆՑ ԴԱՐՄԱՆ ԷՆՖԼՈՒԷՆՑԱՅԻ ԵՒ ՏԱՆԿԻ

Ասիտ Դաւպոնիքը կը փարատէ դեղին գործածութեան յառաջ բերած խիթերն և սրտի խառնուքը։

ԼԸ ԲԷՏՐԻԷԼ ԵՒ ԸՆԿ. ի Բարիզ, եւ դեղատանց մէջ։

SIROP DE RAIFORT IODÉ

DE GRIMAULT & Cie

Pharmaciens à Paris

Բարիստէ մուգիմ էճզաճը Կրիմօլ վէ գումբանեասընըն Սիրօ տը Րէֆօր իօտէ նամ շուրուպու.

Եիկիրմի սէնէտէն պէրու, չօճուգլարա մախսուս խասթալըգլար իչին, Մօրինա Պալըգ Եաղը, վէ գօրպիթի տէֆ իտէր շուրուպ եէրինէ, իչպու շուրուպ վիրիլիպ, բէք չօգ մուհասսէնաթը կէօրիւլմիւշ տիր։

Բօզագտա չըգան ուրլարըն թըգանմասընա, վէ իւֆիւնէթլէնմէսինէ, վէ խըրթլաղըն, վէ տէրի, վէ պաշ, վէ եիւզիւն տիշարը վիրմէսինէ գարշը, ալէա պիր իլաճ օլտուղու կիպի, գըտաահըտա աչար, սինիրէ գուվվէթ վիրիր, ընքըփիզլըխ, վէ միճուտ պէվչէքլիկինի տէֆ իտէր, վէ չօճուգլարա քէնտի թապիի գուվվէթ վէ չէնմէշլէպլիկինի վիրիր։

Բու մուալիճէ մէմէտէքի չօճուգլարըն միճուտլինտէ հուսուլէ կէլիպ, վէ «Գրութ տը լէ» թէսմիէ օլունան իւլէթ իչին չիֆալը տըր։ վէ գանը թէմիզլէյիճի տիր։

Սաթըլըր պիւյիւք էճզախանէլէրտէ։

Բարիստէ վիլլիէն սօգագընտա 8 նումէրօլու մաղազատա վէ սայիր մէշհուր էճզահանէլէրտէ պուլունուր. C



ՔԻՒՆԱՐՏ (CUNARD)

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՇՈԳԵՆԱՒՈՒՑ

Որոյ շոգենաւերն անընդհատ կը բանին Լիվերբուլի և Նիւ-Եորքի միջեւ

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնօ
Ումպրիա	7718	Գադալոնիա	4845
Էդրուրիա	7718	Պոթնիա	4531
Սէրվիա	7391	Սամարիա	3574
Օրանիա	7268	Մարաթոն	2403
Բավոնիա	5587	Ատլաս	2393
Սէֆալոնիա	5517	Սարակոսա	2166
Կալլիա	4809	Թարիֆա	2246
Սիթիա	4557	Բալմիրա	2144
Ալէբբօ	2143	Թրինիտատ	899
Քէտար	1876	Մորոգգօ	1855
Շէրպուրկ	1614		

Սուրհանդակ շոգենաւը, Նաւապետ Ռոթուէլ, Կլասկովէն և Լիվրբուլէն աստ կը սպասուի դէպ ի մարտ 14ին։

Դիմել առ ԹՈՄԱՍ Զ. ՃՈԼԻ գործակալ

Thomas C. Joly

Ալիքսիատիս խան, Թիւ 11

Ղալաթիա

17

PHOSPHATE DE FER

DE LERAS

Docteur ès-Sciences, Pharmacien à PARIS

Այս դեղը, որ թանձրացած երկաթեայ հանքային ջրոյ մը կը նմանի և որ երկաթեայ դեղերուն մէջ միակն է արեան կլլուածներուն [illegible] անեցող, արեան և ոսկրներու նորոգիչ և դժ սուղ է. Ներքէք ախորժակին չի տար, ստամոքը չի յոգնեցներ և ակռաները չի սեւցներ. մեծ յաջողութեամբ կը գործածուի ստամոքսի ցաւերու, գունատութեան, արեան նուազման և ամէն և ամէն տկարութեանց համար որոնց ենթակայ են կանայք, դեռահաս օրիորդներ և տղայք, երբ գունատ, անարիւն և ախորժակէ զուրկ են.

Կը գտնուի 'ի Փարիզ, վիվիէն փողոց 8, Կրիմօլ և ընկ. և համ ամէն գլխաւոր դեղարաններու մէջ. C



ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ՄԱՐՈՔԵԱՆ

Ն. ԲԱՔԸԼ ԵՒ ԸՆԿ.

Մարսիլիոյ և Պաթումի միջեւ [illegible]

Սամսոն, Տրապիզոն և Պաթում երթալիք յառաջիկայ շոգենաւն է Մէնէրէլ որ մարտ 2ին Մարսիլիայէն և մարտ 9ին Կ. Պոլսէն պիտի մեկնի։

Մարսիլիա երթալիք յառաջիկայ շոգենաւն է Անաբոլ որ պիտի մեկնի մարտ 8ին։

Բարիզ-Լիոն-Մարսիլիոյ երկաթուղեաց ուղեւորութիւնն ի միասին առնլով,

Ա. կարգ 250 Ֆրանք
Բ. » 178 »

Ուղղակի և արագ առաքումներ

Նաւողչէքի, ուղեւորութեան և այլ տեղեկութեանց համար

Դիմել առ գործակատարն
ԹԻՄՈԹԷ ՐԸԳՈՒԼ
Մահմուտ Սիթէ Փրան [illegible]

5

Արտօնատէր Ս. ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ

ՌՈՅԱԼ ԷՔՍՉԷՆՃ

ԱՍԻՒՐԱՆՍ ՔՕՐՓՕՐԷՇԸՆ

ԱՄԵՆԷՆ ՀԻՆ ԵՒ ԱՄԵՆԷՆ ՄԵԾ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԼՈՆՏՈՆ 1720 ԻՆ

Դրամագլուխ աւելի քան	Անգլ. ոսկի	4,000,000
Ցարդ հրդեհի արկածից համար տուած է	›	35,000,000

Ընկերութիւնս կ'ապահովագրէ քարաշէն և փայտաշէն ամեն տեսակ կալուածներ, կահ կարասիք և ապրանք։

Վճարմունք ամենայն կանոնաւորութեամբ և ժամանակ առանց որ եւ իցէ ԶԵՂՉԻ կը կատարուին։

Աւելի ընդարձակ տեղեկութիւն առնուլ փափաքողք կը հրաւիրուին դիմել առ Ընդհանուր գործակալս Ճ. Վ. ՈՒԻԹԱԼ ԵՒ ԸՆԿ. Պահճէ Գաբու, Մէյտանճըք սօքաք, Ուիթալ Խան։

EMULSION SCOTT

(ՍԳՈԴԻ ՕՃ.ՈՒՐԷԿ)

ՄՈՐՈՒԻ ՁԿԱՆ ԺՈՒՏ ԻՒՂ,

Իփոֆոսֆիթ կրով և սոտայով

Պատրաստեալ ձեռամբ ՍԳՈԴԻ Է ՊՕՈՒՆԻ ի Նիւ-Եորք։

Կաթին չափ ախորժահամ է

Մորիւ ձկան հում իւղի բոլոր յատկութիւններէն զատ, Իբոֆոսֆիդներու յատկութիւններն ալ ունի

Կը բուժէ Թոքախտը
Կը բուժէ անարիւնութիւնը
Կը բուժէ խոյլերը
Կը բուժէ հազը, ցրտառութիւնները
Կը բուժէ ընդհանուր տկարութիւնը
Կը բուժէ մանկանց ճղաժութիւնը

Բժիշկներէն ընդունուած է, ախորժ համ ու հոտ ունի, դիւրամարս է, և ամենէն փափուկ ստամոքսները կը տանին զայն։

Կը վաճառուի գլխաւոր դեղավաճառաց և դեղագործաց քով։

Գործակատարք ի Կ. Պոլիս, ՀԱՄՄԷՐ ԵՒ ՀԻՐԻԷԼ 212

MERVEILLEUSE DÉCOUVERTE!

Plus d'ASTHME, Plus de SUFFOCATIONS

Les Papiers, les Poudres, les Cigarettes, à base de narcotiques, calment momentanément vos souffrances épouvantables, mais vous tuent sûrement.

ASTHMATIQUES!

Le SEUL CURATIF de l'ASTHME,
Le SEUL REMÈDE INOFFENSIF qui GUÉRIT, c'est la

LIQUEUR DE L'ÉTOILE

du Chimiste Lastes, perfectionnée et préparée par
Mario LECHAUX, Phn-Cien, 164, r. Ste-Catherine, BORDEAUX

Une intéressante Notice, contenant tous les renseignements sur la médication et de nombreuses attestations de son efficacité, est envoyée gratis et franco à tous ceux qui la demandent.

DÉTAIL: Dans toutes les bonnes Pharmacies.

COMP  RUSSE

DE NAVIGATION A VAPEUR ET DE COMMERCE

ՌՈՒՍԱԿԱՆ ՇՈԳԵՆԱՒԱՑԻՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Շաբթուան երթեւեկութիւնք

Բշ.	24 7	Օտեսայի սուրհանդակ, ժամ 2ին յետ միջօրէի։
Գշ.	25/8	Ալէքսանդրիոյ ուղղակի սուրհանդակ, ժամ 5ին յետ միջօրէի. Պիրէէի ճամբով
Դշ.	2,9	Սեւաստոպոլի սուրհանդակ, առաւօտեան ժամ 10ին։
Դշ.	26 9	Սուրհանդակ դէպի փոքր Ասիոյ նաւահանգիստները մինչեւ Պաթում, առաւօտեան ժամը 11ին։
Եշ.	27 10	Օտեսայի սուրհանդակ, ժամ 2ին յետ միջօրէի։

Ազդ.—Փետր. 26/9, երկուշաբթի օրը կ. պոլսէն դէպի Սուրիոյ նաւահանգիստները մեկնող սուրհանդակը Ջիտտէնիոյ մէջ պիտի հանդիպին Թրիբոլի, Պէյրութ, Եաֆա, և Բոր-Սայիտ դացող շոգենաւուն։ 10

Լ'ԷՔՕՆՕՄԻ ԷՆԹԷՐՆԱՍԻՕՆԱԼ

L'ECONOMIE INTERNATIONALE

ԽՆԱՅՈՂՈՒԹԻՒՆ, ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ, ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

Ապահովագրական փոխադարձ ընկերութիւն վասն վերակազմութեան դրամագլխոյ

Հաստատեալ Գաղղիոյ Հանրապետութեան 1868 յունվար 22 հրամանագրոյն համեմատ

ԿԸ ԳՈՐԾԷ ԸՆԴ ՀՍԿՈՂՈՒԹԵԱՄԲ ԳԱՂՂԻՈՅ ՏԷՐՈՒԹԵԱՆ

Ամեն ոք գիտէ խնայողութեան կարեւորութիւնը, բայց շատ անգամ դրամենալով մեր խնայած և աւելցուցած ստակներն ընդունող յատուկ հաստատութիւններ կը կորսնցնենք դրամագլուխ մը կազմելու առիթն և հազար ու մէկ պատճառներ գտնելով մեր խնայածստակներն յումպէտս կը վատնենք։

Փոքր գումարներով դրամագլուխ մը կազմելն ալ դժուարին և գրեթէ անկարելի է, եթէ այսպիսի ընկերութեան մը հետ մասնաւոր կապակցութիւն մի չունենանք։

Ահաւասիկ «Լ'Էքօնօմի Էնթէրնասիօնալ» ընկերութիւնն որուն փոքր գումարներ, այսինքն ամիսը հինգ, տասը եւն վճարելով, ապագային մեր ձեռքը կ'ունենանք համեստ դրամագլուխ մը։

ԱՐԻԹԷՆ ՕԳՏՈՒԻՆՔ 265

Աւելի մանրամասն տեղեկութիւն ուզող և բաժանորդագրուիլ փափաքողները կը հրաւիրուին դիմել ի Սիրքէճի, հանրային պարտուց պաշտօնատան դիմացը, Կիւլպէնկեան խան, Թիւ 26-27. ընդհանուր տնօրէն Բ. ՇԷՀԻՐՃԵԱՆԻ կամ ընդհանուր քննիչ ԱՆԻՔՏՈՍ ԱՀԱՐՈՆԵԱՆԻ։

ԴԱՄԻԱՆՈՍ ՓԱՓԱԶԵԱՆ

Ի ՄԱՀՄՈՒՏ ՓԱՇԱ 241 ԹԻՒ,

ԵՒ Ի ՂԱԼԱԹԻԱ ԷՍԿԻ ՍԱՆՏԸՔՃԸԼԱՐ ՕՔՉՈՒԼԱՐ ՓՈՂՈՑ, 77 ԹԻՒ

ԱՌԱՆՑ ՀԱՄՈԶՄԱՆ ԳՆԵԼՆ ԽՈՐՈՒԻԼ Է



Քսան տարիէ ի վեր արհեստիս բարգաւաճմանը նախանձախնդիր մեր մեծարգոյ յաճախորդներն գոհ ընելով, իրաւամբ մեծ քաջալերութիւն վայելեցի, եւ որովհետեւ յաճախորդացս շատերն Ղալաթիոյ կողմը կը գտնուին, ուստի պարտաւորեցայ վերոյիշեալ Թաղը մասնաճիւղ մը բանալ՝ խոստանալով գործել կազմը տալու, նիւթն հաստատուն եւ ազնիւ, ձեւն ըստ ամենայնի եւրոպական, և գինն կարելի եղածին չափ աժան ընել. սակայն պէտք է գիտնալ թէ, մեր այս աժանութեան պատճառը ոչ թէ ոմանց նման անպիտան նիւթ գործածելով է, այլ եւ գլխաւորաբար նիւթերն բոլոր ուղղակի բերել տալու, եւ շատ քիչ շահելու չափաւորութեան վրայ հիմնեալ է։

Պոթին կալոշ	Ղրշ.	95	Սկարբին	Ղրշ.	52
Մանթարլը Պօթին	»	75	Պարի սկարբին	»	45
Պոթին	»	67	Կոճակաւոր պոթին	»	75
Մոյկ	»	140	Կանանց մուճակ	»	35
Մոյկ և կալոշ	»	130	Կանանց սկարբին	»	40

Ապսպրանքներուն վրայ տասը դրուշ յաւելում կըլլայ։

ԱՐԵՒԵԼԵԱՆ  ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ ԸՆԴ ՄԷՋ Կ. ՊՈԼՍՈՅ ԵՒ ՔԻՒՉԻՒՔ–ՉԷՔՄԷՃԷԻ

Սկսեալ ի 1 Հոկտեմբեր (Ն. Տ.) 1891, մինչեւ նոր տնօրինութիւն

Կ. ՊՈԼՍԷՆ ՔԻՒՉԻՒՔ–ՉԷՔՄԷՃԷ

ԹՈՒԱՀԱՄԱՐ ԿԱՌԱԽՄԲՈՑ

	6	8	10	52	12	14	16	18	20	22	24	26	28	30	32	34	36	38	40	42	44	46			
	Առաւօտ												Իրիկուն												
	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.
Կ. Պոլիս	6 30	7 ...	7 30	7 50	8 30	9 ...	9 30	10 ..	10 30	11 ...	11 30	12 ..	1 30	2 ...	2 30	3 ..	4 ...	4 30	5 .	5 30	6 30	7 ...	...	..	...
Գում-գափու	6 39	7 9	7 39	8 8	8 39	9 9	9 39	10 9	10 39	11 9	11 39	12 9	1 39	2 9	2 39	3 9	4 09	4 39	5 9	5 39	6 39	7 08	...	..	...
Եէնի-գափու	6 43	7 13	7 43	...	8 43	9 13	9 43	10 13	10 43	11 13	11 43	12 13	1 43	2 13	2 43	3 13	4 13	4 43	5 13	5 43	6 43	7 12	..	...	...
Տաւուտ փաշա	...	...	...	...	...	...	...	... ...	... ...	... ...	... ..	... ...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...
Սամաթիա	6 49	7 19	7 48	...	8 49	9 18	9 49	10 19	10 49	11 19	11 49	12 19	1 49	2 18	2 49	3 19	4 19	4 49	5 19	5 49	6 49	7 18	...	...	...
Եէտի-գուլէ	6 55	7 23	8 1	8 22	8 55	9 21	9 54	10 23	10 55	11 24	11 55	12 22	1 55	2 21	2 54	3 23	4 23	4 55	5 26	5 55	6 55	7 22	...	...	...
Մագրիգիւղ	7 9	7 33	8 12	8 39	9 6	...	10 4	10 33	11 6	11 36	12 05	.. ...	2 06	...	3 04	3 36	4 33	5 06	5 39	6 06	7 06	7 33	...	...	...
Այ Ստեֆանօ	7 18	...	8 21	8 52	9 15	...	...	... ...	11 15	11 47	... ...	... ...	2 15	...	...	3 45	...	5 15	5 48	6 13	...	7 43	...	...	...
Քիւչիւք Չէք.	...	...	...	9 2	...	...	...	... ...	... ...	11 55	... ...	... ...	...	...	...	...	...	...	...	6 24	...	...	...	...	...
....	...	...	...	...	...	...	...	... ...	... ...	... ...	... ...	... ...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...

ՔԻՒՉԻՒՔ–ՉԷՔՄԷՃԷԷՆ Կ. ՊՈԼԻՍ

ԹՈՒԱՀԱՄԱՐ ԿԱՌԱԽՄԲՈՑ

	5	7	9	11	13	15	17	19	21	23	25	27	29	31	33	35	37	39	41	43	45	51			
	Առաւօտ										Իրիկուն														
	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.
Քիւչիւք Չէք.	...	6 50	...	...	...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	12 50	...	...	...	...	...	...	...	...	...	7 05	...	...	...
Այ Ստեֆանօ	6 30	7 ...	...	8 ...	8 30	... ...	9 30	... ...	... ...	11 27	... ...	1 ...	...	...	2 30	...	4 ...	...	5 30	5 57	...	7 8	...	...	...
Մագրիգիւղ	6 40	7 10	7 39	8 11	8 40	... ...	9 40	0 10	10 40	11 38	12 24	1 10	...	...	2 40	3 10	4 10	4 40	5 40	6 10	7 10	7 43	...	...	...
Եէտի-գուլէ	6 52	7 22	7 50	8 23	8 52	9 26	9 52	10 22	10 52	11 52	12 44	1 22	1 52	2 26	2 52	3 22	4 22	4 52	5 52	6 22	7 21	7 57	...	...	...
Սամաթիա	6 56	7 26	...	8 27	8 56	9 29	9 56	10 26	10 56	11 56	12 48	1 26	1 56	2 29	2 56	3 26	4 26	4 56	5 56	6 26	...	...	...	...	...
Տաւուտ փաշա	...	...	...	...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ..	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...
Եէնի-գափու	7 2	7 32	...	8 33	9 02	9 34	10 02	10 32	11 2	12 02	12 54	1 32	2 02	2 34	3 02	3 32	4 32	5 02	6 02	6 32	...	...	...	..	...
Գում-գափու	7 8	7 38	7 59	8 38	9 08	9 38	10 08	10 38	11 8	12 08	12 58	1 38	2 08	2 38	3 08	3 38	4 38	5 08	6 08	6 38	7 41	8 06	...	...	...
Կ. Պոլիս	7 16	7 46	8 7	8 46	9 16	9 46	10 16	10 46	11 16	12 16	1 06	1 46	2 16	2 46	3 16	3 46	4 46	5 16	6 16	6 46	7 50	8 15	...	...	...
....	...	...	...	...	...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	... ...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	..

Փոքր ծրարներն անխտիր կ'ընդունուին ամեն կառախմբի մէջ, իսկ մեծ ծրարք Պոլսէն Մագրիգիւղ կամ աւելի հեռի կայարանաց միջեւ բանող կառախմբոց մէջ միայն կ'ընդունուին։

1